



ՄԱԿ-ի ԼՐԱՏՈՒՄ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ

N°6



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|--|----|
| ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր (UNDP) | 2 |
| Համաշխարհային պարենի ծրագիր (WFP) | 4 |
| Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO) | 5 |
| Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM) | 6 |
| ՄԱԿ-ի Սշտական համակարգող | 8 |
| ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար (UNHCR) | 10 |
| ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF) | 12 |
| ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (UNFPA) | 15 |
| ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժին (DPI) | 16 |

ՄԱԿ-ի ՕՐԸ 2000



Հանդիսությունների մանրամասները տես՝ էջ 8-9

. ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ԱՐԴՅՈՒՆԸ



Աշխարհի պետությունների ու կառավարությունների ղեկավարների ամենամերկայացուցչական հավաքը մեծ իրադարձություն էր Միավորված ազգերի կազմակերպության 55-ամյա պատմության մեջ: 99 պետությունների ղեկավարներ (ներառյալ 1 ոչ անդամ պետություն Շվեյցարիան), 48 կառավարությունների ղեկավարներ, 5 փոխնախագահներ, 1 թագաժառանգ, 2 բարձրաստիճան պաշտոնյաներ (Վատիկանից եւ Պաղեստինից), 6 փոխվարչապետներ, 21 նախարարներ եւ 7 պատվիրակության ղեկավարներ մասնակցեցին Հազարամյակի գագաթաժողովի, բազմաթիվ կլոր սեղանների ու ասուլիսների եռօրյա աշխատանքներին, որոնք տեղի ունեցան այս տարի սեպտեմբերի 6-8-ը Նյու Յորքում: 82 պետությունների ղեկավարներ, պարտավորություն ստանձնելով, ստորագրեցին մեծ թվով բազմակողմ պայմանագրեր, որոնք ի պահ են տրված ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

Սակայն գլոբալ գագաթաժողովի ամենամեծ ձեռքբերումը եղավ Հազարամյակի հռչակագրի ընդունումը, որը իրավամբ կարելի է համարել մոր դարի ուղենշային փաստաթուղթ:

Հռչակագիրը մշակվել է ամիսներ տեսած քննարկումներից հետո, հաշվի են առնվել տարածաշրջանային լսումները եւ Հազարամյակի համաժողովը, մի բան, որ հնարավորություն է տվել լսելի դարձնել ժողովրդի ձայնը:

Հռչակագրում աշխարհի առաջնորդները նշել են Կազմակերպությունը մոր դարին համապատասխանեցնելու հստակ ուղիներ: Նրանց պարզապես մտահոգում է ՄԱԿ-ի արդյունավետության խնդիրը: Նրանք գործ են ակնկալում, առավել եւս՝ արդյունք: Բայց վերջիվերջո առաջնորդը հենց իրենք են՝ Միավորված ազգերի կազմակերպությունը: Նրանց ձեռքին է, հետեւապես նրանք են պատասխանատու իրենց իսկ նախանշած նպատակները իրականացնելու համար:

Հազարամյակի հռչակագրի ամբողջական բնագրի համար այցելեք հետեւյալ վեբ կայքը.

<http://www.undpi.am/millennium/index.html>



ՄԱԶԾ-ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 2-րդ ԾՐԱԳԻՐԸ

2000թ. սեպտեմբերի 29-ին, իր 3-րդ հերթական նիստում ՄԱԶԾ Գործադիր խորհուրդը հաստատեց Հայաստանի հետ համագործակցության 2-րդ ծրագիրը: Ինչպես 1997-1999թթ. համագործակցության 1-ին, այնպես էլ 2-րդ ծրագիրը նախապատրաստվել են ՀՀ Կառավարության հետ համատեղ, զարգացման ասպարեզում գործող բոլոր գործակալությունների հետ խորհրդակցությունների արդյունքների հիման վրա:

Իրականացվելիք համագործակցության ծրագրի ընթացքում ՄԱԶԾ-ն նախատեսում է իր գործունեությունը միացնել անցման շրջանի բացասական արդյունքները հաղթահարելուն և բազմակողմանի զարգացման ճանապարհը հարթելուն ուղղված երկրի ջանքերին: Այս առումով ՄԱԶԾ-ն նախատեսում է (1) աջակցել ՀՀ կառավարությանը աղքատության և գործազրկության աճող մակարդակը նվազեցնելու գործում, (2) նպաստել կառավարման համակարգի բարեփոխումների ընթացքին դրա արդյունավետությունը և թափանցիկությունը բարձրացնելուն և կաշառակերությունը նվազեցնելուն ուղղված միջոցառումների միջոցով,

(3) օգնել կառավարությանն ապահովելու զենդեռային հավասարությունն պետական համակարգում, և (4) նպաստել բնության պահպանության գործողությունների ազգային ծրագրի իրականացմանը:

Գենդերի և բնապահպանության առանցքային թեմաներին զուգընթաց փաստաթուղթը ներկայացնում է երկու հիմնական ծրագրային ուղղություններ. (ա) կառավարում, և (բ) աղքատության նվազեցում և ետկոնֆլիկտային վերականգնում:

Յուրաքանչյուր ծրագրային ուղղություն ունի երկու ենթածրագիր, այն է.

- կառավարման համակարգի բարելավում տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների միջոցով,
- ժողովրդավարության խթանում կարողությունների ստեղծման միջոցով

և

- աղքատության նվազեցման և սոցիալական զարգացման ազգային ռազմավարության մշակում,
- ետկոնֆլիկտային վերականգնման կարողությունների ստեղծում:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԶԾ-Ի ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

«Մարդկային զարգացման 5 տարիները» վերնագրով Հայաստանի 1999 թ. մարդկային զարգացման զեկույցը ս.թ. հոկտեմբերի 9 - 10-ը Ռիո դը ժանեյրոյում կայացած Մարդկային զարգացման երկրորդ համաշխարհային համաժողովում արժանացավ երկու մրցանակների՝ «Մասնակցության և քաղաքականության վրա ազդեցության համար» և «Մարդկային զարգացման գնահատման մեթոդների նորարար օգտագործման համար»:

Հայաստանը մարդկային զարգացման զեկույցներ է պատրաստել սկսած 1995 թվականից: Զեկույցների թեմաներն էին. 1995՝ Անցման մարդկային արժեքը, 1996՝ Աղքատություն, 1997՝ Սոցիալական համաձայնություն, 1998՝ Պետության դերը: 1999 թ. հոբելյանական զեկույցի հաջողության և ճանաչման նախապայմանը նախորդ զեկույցների գնահատականներն ու եզրակացություններն են, որոնք իրենց վերլուծական արտացոլումն են գտել ներկա զեկույցի համապատասխան գլուխների մեջ:

Մարդկային զարգացման երկրորդ համաշխարհային համաժողովի հիմնական թեման մարդու իրավունքներն էին: Համաժողովին ներկա 250 առաջատար գիտնականները, քաղաքական գործիչները և զարգացման ու մարդու իրավունքների ակտիվիստները հավաքվել էին՝ քննարկելու 2000 թ. մարդկային զարգացման միջազգային զեկույցը՝ նվիրված մարդու իրավունքներին ու մարդկային զարգացմանը, և առաջարկելու նոր մոտեցումներ՝ զեկույցում բովանդակող առաջարկությունների իրականացման քաղաքականության վերաբերյալ: Համաժողովի կազմակերպիչներն էին ՄԱԶԾ Մարդկային զարգացման զեկույցի գրասենյակը, Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը, Կանդիդո Մենդես համալսարանը և Էթիկայի ու միջազգային հարցերով Կարնեգիի խորհուրդը:

Մրցանակների արժանացան նաև Բոլիվիայի, Բրազիլիայի, Բուլղարիայի, Բուրկինա Ֆասոյի, Չիլիի, Չինաստանի, Կոստա Ռիկայի, Եգիպտոսի, Լատվիայի, Լիբանանի, Մոզամբիկի և Ֆիլիպինների մարդկային զարգացման ազգային զեկույցները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հայաստանի գիտական և հետազոտական ներուժի ամբողջ հարստությունը արտացոլվել է 2000 թ. հոկտեմբերին հրատարակված Հայաստանի բարձր տեխնոլոգիաների տեղեկատուի մեջ: Տեղեկատուն պատրաստվել է «Արտահանման խթանում և զարգացում» ՄԱԶԾ-ի ծրագրի շրջանակներում, անկախ փորձագետների կողմից: Այն հաջողում է Հայաստանի արտահանման տեղեկատուին, որը տպագրվեց մեկ տարի առաջ նույն ծրագրի շրջանակներում՝ որպես Հայաստանի արտահանման հնարավորությունները ամբողջական կերպով աշխարհին ներկայացնելու առաջին փորձ:

Բարձր տեխնոլոգիաների տեղեկատուի հրատա-

րակման նպատակն է ՄԱԶԾ-ի հնարավորությունների շրջանակներում աջակցել երկրի գիտական և տեխնոլոգիական ներուժի զարգացմանը և ըստ պատշաճի գնահատել այն դերը, որ ունեն դրանք տնտեսության և հասարակության մեջ: Տեղեկատուի հրատարակումը նաև համահունչ է 2000 - 2004 թթ. ՄԱԶԾ և ՀՀ-ի համագործակցության ծրագրի նպատակներին, որոնց հիմնական ուղղություններից մեկն է տեղեկատվական և կապի տեխնոլոգիաները ծառայեցնել ժողովրդավարության զարգացման նպատակին:

Հայաստանում ՄԱԿ-ի Համակարգողի գրասենյակը եւ ՀՀ Պետական կառավարման բարձրագույն դպրոցը ս/թ հոկտեմբերի 6-ին ՄԱԿ-ի գրասենյակի դահլիճում կազմակերպել էին գեներալային հիմնահարցերի երիտասարդ հետազոտողների առաջին ազգային խորհրդաժողովը «Հազարամյակի սերունդ» խորագրով:

Խորհրդաժողովը նպատակ ուներ համախմբել Հայաստանում գեներալային հետազոտություններում ընդգրկված երիտասարդ մասնագետների ուժերը: Ռազմավարական առումով խորհրդաժողովի նպատակը գեներալային հետազոտությունների շարունակականության եւ

այս ոլորտում երիտասարդ հետազոտողների նոր սերնդի ապահովումն է:

Ի թիվս այլոց, խորհրդաժողովի խնդիրներն են Հայաստանում գեներալային հետազոտություններում ընդգրկված երիտասարդ մասնագետների ներուժի վերհանումը եւ նրանց նախաձեռնությունների խրախուսումը, բարձրագույն կրթության ազգային հաստատությունների եւ հետազոտական կենտրոնների կողմից երիտասարդ հետազոտողների ուսուցման եւ մասնագիտական աճման արդյունավետության գնահատումը, հասարակության ուշադրության հրավիրումը գեներալային հիմնահարցերի վրա, ինչպես նաեւ ՊԵԿԻՆ +5 ազգային գործընթացներին երիտասարդների մասնակցության խթանումը:

Խորհրդաժողովը համախմբեց Հայաստանում գեներալային հետազոտություններում ընդգրկված երիտասարդ մասնագետներին: Այն կխթանի երիտասարդ մասնագետների միջոց տեղեկությունների փոխանակումը եւ համագործակցությունը: Խորհրդաժողովի ընթացքում ներկայացվեցին շուրջ 20 զեկուցումներ ու հաղորդումներ. հատուկ ուշադրություն հատկացվեց վերջին երկու

տարներին երիտասարդ հետազոտողների կողմից իրականացված աշխատանքներին:

Խորհրդաժողովը ներառում էր բեմատիկ միտեր զբաղվածության եւ տնտեսության, քաղաքական մասնակցության եւ իշխանության գեներալային հիմնահարցերի, եւ մշակույթում գեներալային դերերի եւ կերպարների արտացոլման վերաբերյալ: Խորհրդաժողովում արծարծված հիմնահարցերը հետազոտական շրջանակների ուշադրության կենտրոնում են եւ կարելի էր ենթադրել, որ միջազգային իրականությունում: ՄԱԿ-ի Վլխավոր քարտուղարի Հազարամյակի զեկույցում մասնավորապես նշվում է, որ երկրներում եկամտի անհավասարության հիմնական պատճառը գեներալային խտրականությունն է վաստակի, սեփականության իրավունքի, կրթության մատչելիության հարցերում եւ այլն:

Խորհրդաժողովի արդյունքները կամփոփվեն «Գեներալային հետազոտություններ: Ուսանողի տեսքեր» գիրքում ներկայացնելով գեներալային հիմնահարցերի երիտասարդ հետազոտողների լավագույն աշխատանքները:



Լուսանկարը: Արմինե Հալաջյանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2000 թ. սեպտեմբերի 22-ին, ՄԱԶԾ-ի «Աջակցություն մարդկային զարգացմանը» ծրագրի շրջանակներում վերականգնված առողջապահական կենտրոնը բացեց իր դռները Շիրակի մարզի 10 համայնքների բնակիչների համար: Կենտրոնն ունի ամբուլատորիա եւ ծննդատուն, ապահովված է հիմնովին վերականգնված ջեռուցման համակարգով, անհրաժեշտ կահույքով, եւ դեղորայքով (վերջինս տրամադրվել է UMCOR կազմակերպության կողմից):

Ադին գյուղում գտնվող այս առողջապահական կոնտրոնը ծառայություններ կմատուցի շրջանի առավել անապահով 8-10 հազար բնակիչների: Ավելի քան տաս տարի է, ինչ աղետի այս գոտու բնակիչները զրկված էին պատշաճ բուժապասարկման ծառայություններից: Իրավիճակը բավական բարելավվեց նոր առողջապահական կենտրոնի շահագործման շնորհիվ, որն ի դեպ ամենախոշորն է մինչեւ օրս ՄԱԶԾ-ի կողմից վերականգնված սոցիալական օբյեկտների շարքում:

Բնությունն անմիջապես արձագանքեց համայնքների կյանքում տեղի ունեցած դրական փոփոխությանը: Բացման օրը չորս երեխա ծնվեց նոր կենտրոնում: Նվազող ժողովրդագրական ցուցանիշների եւ վերարտադրողական առողջության ու ըն-

տանիքի պլանավորման շուրջը հակասական կարծիքների համատեքստում ՄԱԶԾ-ն իր լուսնում ունեցավ երկրի առնվազն մեկ անկյունում մարդկանց երեխա ունենալու ազատ իրավունքը ապահովելու գործում եւ պատշաճ պայմաններ ու խնամքի հնարավորություններ ստեղծեց աշխարհ եկած մանուկների համար:

Այս կենտրոնը, որը ՄԱԶԾ-ի կողմից վերականգնված 17-րդ բուժապասարկման հաստատությունն է, Շիրակում, Լոռիում, Տավուշում եւ Սյունիքում իրականացվող մեծածավալ ենթաօրագրի մի մասն է: Ընդհանուր առմամբ մինչեւ 2000 թ. վերջը 22 բուժապասարկման հաստատություններ ամբողջությամբ կվերականգնվեն եւ կսպասարկեն աղետից եւ պատերազմից տուժած Հայաստանի 4 մարզերի 40 համայնքների ավելի քան 70 հազար բնակիչների: Ենթաօրագիրը՝ 2.9 միլիոն ԱՄՆ դոլար բյուջեով «Աջակցություն կայուն զարգացմանը» ՄԱԶԾ-ի ծրագրի մասը, աջակցություն է ցուցաբերում ՀՀ կառավարության կողմից իրականացվող առողջապահական համակարգի բարեփոխմանը եւ ապակենտրոնացման քաղաքականությանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս.թ. հոկտեմբերի 10-12-ը, Ալբանիայի, Հայաստանի, Բելարուսի, Խորվաթիայի, Վրաստանի, Ղրղզստանի, Մակեդոնիայի, Մալթայի, Սլովակիայի, Սլովենիայի, Թուրքմենստանի, Ռեպուբլիկայի եւ Տաջիկստանի բնության պահպանության մասնագետներն ու պաշտոնյաները հավաքվեցին Երեւանում՝ Դվին հյուրանոցում՝ քննարկելու բնության պահպանության հիմնական միջազգային համաձայնագրի՝ Կլիմայի փոփոխության կոնվենցիայի վերաբերյալ ազգային զեկույցների նախապատրաստման փորձը եւ խնդիրները:


«Ազգային զեկույցների նախապատրաստման տարածաշրջանային փորձի փոխանակում» խորագրով սեմինարի նպատակն էր հնարավորություն տալ մասնակից երկրների փորձագետներին՝ քննարկելու կլիմայի փոփոխության ազգային զեկույցների որակը բարձրացնելու հետ կապված ազգային եւ տարածաշրջանային զերակայությունները:

Սեմինարի հիմնական խնդիրներն են.
· քննարկել ազգային զեկույցների նախապատրաստման համար անհրաժեշտ նեղ մասնագիտական հետազոտությունների որակը բարձրացնելու ուղիները,

· մշակել առաջարկություններ ազգային զեկույցների նախապատրաստման գործընթացի արդյունավետությունը

բարձրացնելու նպատակով,
· քննարկել տեխնիկական աջակցության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունը կլիմայի փոփոխության վերաբերյալ իր առաջին ազգային զեկույցը ներկայացրեց 1998 թ. դեկտեմբերին Բուենոս Այրեսում: Ձեկույցը եւ կլիմայի փոփոխության վերաբերյալ ուսումնասիրությունը նախապատրաստվել էին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորված եւ ՄԱԶԾ աջակցությամբ ՀՀ բնության պահպանության նախարարության կողմից իրականացված ծրագրի շրջանակներում: Հայաստանի զեկույցը առաջիններից մեկը ներկայացվեց եւ բարձր գնահատականի արժանացավ Կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարության ու Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից:





ՊՅԾ-ի ԵՐԱՇՏԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՅ

Սեպտեմբերին ՊՅԾ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց ՄԱԿ-ի գործակալությունների, Կարմիր խաչի ու ՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած երաշտի օգնության աշխատանքային խումբ:

Երաշտի օգնության աշխատանքային խմբի՝ նյութների 6-ին կայացած ժողովում ստեղծվեցին չորս ենթախմբեր, որոնք առանձին-առանձին կանդիդատներն ենտելյալ հարցերին. ա. Դպրոցների սնուցում, որը իրականացնում են Պարենային ապահովության եվրոպական հանձնաժողովը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, UMCOR-ը, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Կաթոլիկ օգնության ծառայությունները, Նորվեգիայի փախստականների խորհուրդը եւ Պարենի համաշխարհային ծրագիրը, բ. Գյուղատնտեսական ծրագրեր, որոնք գլխավորում են ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտը եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, գ. Օգնության ծրագրեր, որոնք ներկայացնում են Հայկական կարմիր խաչը, ԳԹԶ-ն, «Առաքելություն արեւելքը», Ֆրանսիայի ժողովրդական օգնությունը, «Կարիտաս Հայաստանը», Կաթոլիկ օգնության ծառայությունները, Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիան, «Փրկեք երեխաներին», «Ակցիա ընդդեմ սովի» կազմակերպությունները եւ Ամերիկյան կարմիր խաչը, դ. Սնունդ աշխատանքի դիմաց, որը ներկայացնում են Մակ-ի Զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը, ԳԹԶ-ն, Նորվեգիայի փախստականների խորհուրդը, «Փրկեք երեխաներին», «Շեն» կազմակերպությունները, Հայկական կարմիր խաչը, «Առաքելություն արեւելքը», Ֆրանսիայի ժողովրդական օգնությունը, «Կարիտաս Հայաստանը», Կաթոլիկ օգնության ծառայությունները, Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիան, «Ակցիա ընդդեմ սովի» եւ Պարենի համաշխարհային ծրագիրը:

Դպրոցների սնուցում

ԱՄՆ իշխանությունների կողմից հաստատվելուց հետո Պարենի համաշխարհային ծրագիրը կսկսի դպրոցների սնուցման ծրագիրը, որից կօգտվեն սովորական դպրոցներ եւ ուսումնական այլ հաստատություններ հաճախող 120 հազար դպրոցականներ: Ծրագրին կհատկացվի ավելի քան 3300 տոննա սննդամթերք: Թխվածքաբլիթները կթխվեն ամբողջ երկրում գործող ընտրված փռերում:

Կաթոլիկ օգնության ծառայությունները հպարտակել է Գեղարքունիքի մարզում եւ Երեւանում 6000 դպրոցականների սնուցման ծրագիրը: UMCOR-ը ծրագրում է համանման ծրագիր սկսել 100 գիշերօթիկ դպրոցների համար: Եվրամիության պարենային ապահովության ծրագիրը նախատեսում է 2001թ. ֆինանսավորել 7-8 դպրոց: Դպրոցներին տրամադրվելիք 1 մլն ԱՄՆ դոլարը կհատկացվի բացառապես սննդին առնչվող ծախսերի համար: Դրանից աշխատողների աշխատավարձեր չեն վճարվի:

Գյուղատնտեսական ծրագրեր

Հայկական տեխնոլոգիական խումբը եւ ԱՄՆ գյուղդեպարտամենտը տեղեկացրել են աշնանացան ցորենի բաշխման հաջող ավարտի մասին: Երաշտից առավել տուժած Լոռու, Շիրակի ու Տավուշի մարզերի հողագործներին բաշխվել է

չորը 1700 տոննա սերմ այս աշնանը 10 հազար հեկտար հողատարածք ցանելու համար:

Երաշտի օգնության ծրագրեր

UMCOR-ը տեղեկացրել է դեկտեմբերի կեսին սկսվելիք ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորած սոցիալական անցման ծրագրի մասին, որով պարենային օգնություն կստանան «Փարոս»-ով ընտրված երաշտից տուժած գյուղական ու քաղաքային 84 հազար ընտանիքներ: Մի ընտանիքի մթերաբաժինը կլինի 3 կգ ցորենի ալյուր, 1 կգ յուղ եւ 0.5 կգ շաքար: Կիրարկող համագործակից է ընտրվել «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը:

Սնունդ աշխատանքի դիմաց (ՍԱԴ)

Այս տարի ՊՅԾ-ն ստացել է ՍԱԴ ծրագրի ավելի քան հազար առաջարկ, որոնցից մոտավորապես կեսը մերժվել է այն հիմնական պատճառով, որ աղքատ համայնքները չեն կարողացել ապահովել ծրագրի կիրարկմանն անհրաժեշտ ներդրումները: ՊՅԾ-ն վերանայելու է մերժված առաջարկները, որպեսզի առանձնացնի երաշտից տուժած մարզերից ստացված գյուղատնտեսական ենթակառույցի վերաբերյալ ծրագրերը:

Այս ենթախումբը ՊՅԾ-ն նախաձեռնել է տեղական ու միջազգային այնպիսի համագործակիցներ հայտնաբերելու նպատակով, որոնք շահագրգիռ են նման ծրագրերի համար ներդրումներ անել կամ որոշակի ՍԱԴ ծրագրեր մշել:

ՊՅԾ-ն պարզաբանել է, որ իր ընթացիկ ծրագրի շրջանակներում իրականացվող ՍԱԴ ծրագրերի համար հաստատված նորմերը նույնպիսի խստությամբ չեն գործի Արտակարգ ծրագրի շրջանակներում իրականացվելիք ՍԱԴ ծրագրերի համար, քանի որ տվյալ դեպքում ՊՅԾ-ի խնդիրն առաջին հերթին սննդից զուրկ մնացած մարդկանց պարենային օգնություն տրամադրելն է եւ նոր միայն որեւէ գործունեության դիմաց սնունդով հատուցելը:

ՊՅԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՕՐԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Լուսանկարը՝ ՊՅԾ-ի

ՊՅԾ Արեւմտյան Ասիայի եւ Կովկասի տարածաշրջանի տնօրեն Մայքլ Սաքթերը այս ամառանը երաշտից տուժած տարածաշրջանի երկրներում շրջագայության շրջանակներում հոկտեմբերի 26-30-ը Հայաստան այցելեց: Ժամանման օրը պրն Սաքթերը մամուլի ասուլիս տվեց այս ամառվա երաշտից Հայաստանի տուժածների օգնության ՊՅԾ ծրագրի վերաբերյալ:

ԵՐԱՇՏԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ըստ ՊՅԾ-ի, նոյեմբերի վերջից մինչև հունիսի վերջը արտակարգ պարենային օգնության կարիք կունենա օժանդակ տնտեսությամբ զբաղվող շուրջ 297 հազար գյուղացի, ինչպես նաև երաշտից տուժած այլ անձինք: Ի լրումն այն պարենային օգնության, որն արդեն իսկ ՊՅԾ-ի ընթացիկ ծրագրով ստանում է 170 հազար մարդ, ՊՅԾ-ն Արտակարգ օգնության ծրագիր է նախատեսել երաշտից տուժածների սննդային կարիքները հոգալու համար: Երաշտից տուժածների համար նախատեսված այս օգնության ծրագրի իրականացման համար ՊՅԾ հայաստանյան գրասենյակին անհրաժեշտ կլինի շուրջ 22.500 տոննա սնունդ:

ՊՅԾ-ի ընթացիկ ծրագրի անվճար օգնության շրջանակներում օգնություն են ստանում քաղաքաբնակ կարիքավոր ընտանիքներ ու փախստականներ: Երաշտից տուժածների օգնության ծրագրով անվճար սննդի բաշխումից կօգտվի 175820 մարդ: 121180 մարդ պարեն կստանա՝ մասնակցելով սնունդ աշխատանքի եւ

սնունդ վերապատրաստման դիմաց ծրագրերին: Կլիմայական պայմանների նկատառումով այնտեղ, որտեղ հնարավոր կլինի, սնունդ աշխատանքի եւ սնունդ վերապատրաստման դիմաց ծրագրեր կիրականացվեն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Բայց քանի որ ձմռան ամիսներին աշխատանքի դիմաց սնունդի շատ ծրագրեր իրականացնել հնարավոր չէ, նաև հնարավոր է՝ տեղումների պատճառով ճանապարհային շատ հատվածներ անանցանելի դառնան, օգնություն ստացողների մեծ մասին անվճար պարենը կհատկացվի 2000թ. նոյեմբերից մինչև 2001թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում:

2001թ. մարտի 1-ից մինչև հունիսի 30-ը անվճար պարենային օգնություն կստանան միայն նրանք, ովքեր չեն կարող մասնակցել սնունդ աշխատանքի եւ սնունդ վերապատրաստման դիմաց ծրագրերին, այսինքն՝ միայնակ ծեբերը, հաշմանդամները, ընտանիքներ կերակրող կանայք եւ այլ կարիքավոր խմբեր:



ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Շարունակվում է Հայաստանում ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի աջակցությունը (Առողջությունը բոլորի համար, նպատակ 7): Ինունոկանխարգելման ընդլայնված ազգային ծրագիրը (ԻԸԱԾ) ավելի է հիմնավորվել եւ կառուցիկ դարձել:

Հայաստանը միացել է պոլիոմիելիտի վերացման համաշխարհային նախաձեռնությանը եւ սկսած 1994 թվականից ձեռնամուխ է եղել դրա գործնական իրականացմանը: Հետագա տարիներին ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի առաջնորդությամբ ու միջազգային հանրության աջակցությամբ ահռելի աշխատանք է կատարվել, եւ նշանակալի նվաճումներ են ձեռք բերվել: Այլ երկրների հետ միասին Հայաստանը հաջողությամբ կատարում է ՄԵԿԱԿԱՐ եւ ՄԵԿԱԿԱՐ Պլյուս լայնածավալ գործողությունները, որոնք Եվրոպական եւ արեւելամիջերկրական երկրների աննախադեպ համագործակցության ցայտուն օրինակ են:

Հայաստանում, որը դեռեւս ոչ վաղ անցյալում էնդեմիկ երկիր էր պոլիոմիելիտի առումով, 1995թ. հունիսից ի վեր այս հիվանդության ոչ մի դեպք չի արձանագրվել: 1996թ. սկսվել է հաջողությամբ ընթանում է սուր թորչնած պարալիչների (ՍԹՊ) հսկողությունը, որը շատ կարեւոր է պոլիոմիելիտի վերացման վերջնական փուլում: Ինունոկանխարգելման ծրագիրը հասել է եւ ներկայումս պահպանում է պոլիոմիելիտի դեմ երեխաների պատվաստման բարձր մակարդակը, որն ապահովվում է նաև Ինունոկանխարգելման ազգային օրերի եւ “նաքրման” արշավների ժամանակ:

2000թ. հուլիսին Հայաստանը ԱՀԿ Եվրոգրասենյակին ներկայացրեց երկիրը՝ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի վկայագրելու փաստաթղթերը:

Գ Եվրոպական տարածաշրջանային վկայագրման հանձնաժողովը 2000թ. հոկտեմբերի 11-13-ը Քիշնեւում անցկացրած հանդիպման ժամանակ վերանայեց 6 երկրների կողմից ներկայացված փաստաթղթերը եւ նշեց Հայաստանում նվաճված ակնհայտ արդյունքները՝ ինունոկանխարգելման եւ ՍԹՊ հսկողության բարձր արդյունավետությունը: Հանձնաժողովը հույս հայտնեց, որ ձեռքբերումները կպահպանվեն:

Գ 2000թ. հոկտեմբերի 14-ին դարձյալ Քիշնեւում կայացավ ինունոկանխարգելման ազգային ծրագրերի ղեկավարների ամենամյա հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին կարմրուկի դեմ պայքարի եւ վերացման ռազմավարությունները: Տարածաշրջանի երեք երկրներ, ներառյալ Հայաստանը, ներկայացրեցին իրենց ազգային պլանները:

Գ 2000թ. նոյեմբերի 6-7-ը Կոպենհագենում կայացավ ԱՀԿ ոչ պաշտոնական խորհրդակցություն՝ նվիրված Եվրոպական տարածաշրջանում կարմրուկի վերացման հարցին: Հայաստանի ինունոկանխարգելման ազգային ծրագրի ղեկավարը, որը միակ փորձագետն էր ԱՊՀ-ից, այդ միջոցառմանը մասնակցեց ԱՀԿ ժամանակավոր խորհրդականի կարգավիճակով:

ԱՀԿ առաքելությունները Հայաստան ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի նպատակով

27-31 հոկտեմբեր, 2000թ.: Գվիդո Սաբատինելի եւ Անատոլի Կոնդրաշին, նպատակը՝ գնահատել 2000թ. ընթացքում մալարիայի դեմ պայքարի միջոցառումների արդյունավետությունը եւ տեխնիկական աջակցությունը ցուցաբերել 2001թ. ընթացքում կատարելիք միջոցառումների պլանավորմանը:

7-8 նոյեմբեր, 2000թ.: Ռիզարդո Ջալեսկիս, նպատակը՝ գնահատել ներկա իրավիճակը տուբերկուլյոզի դեմ պայքարում եւ պլանավորել հետագա անելիքները:

■ **11-14 սեպտեմբեր, 2000 թ.:** Կոպենհագենում անցկացվեց ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 50-րդ նստաշրջանը, որի ընթացքում քննարկվեցին եւ որոշումներ ընդունվեցին տարածաշրջանային տնօրենի հաշվետվության, պոլիոմիելիտի վերացման մասին հաշվետվության, երկրներում ԱՀԿ ապագա ռազմավարությունների, հասարակական առողջության վրա սննդի եւ սնուցման ազդեցության, եւ այլ հարցերի վերաբերյալ: Նստաշրջանին մասնակցեց ՀՀ առողջապահության նախարար Ա. Մկրտչյանը:

■ **3-5 նոյեմբեր, 2000 թ.:** Երեւանում անցկացվեց Հարավային Եվրոպայում առողջապահական բարեփոխումների ռազմավարությունների փորձագետների ցանցի չորրորդ հանդիպումը, որին մասնակցեցին 9 երկրների ներկայացուցիչներ:



ՄՄԿ-ի ԳԼԽԱՎՈՐ ՏԵՐԵՆԻ ԱՅՑԸ ԶԱՅԱՍՏԱՆ

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Գլխավոր տնօրեն պրոֆ. Բրանսոն Սքեյնլիի հոկտեմբերի 22-ին երկօրյա արդյունավետ այցելություն կատարեց Հայաստան: Պարոն Սքեյնլիի հանդիպեց ՀՀ ներկայացուցիչների և բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի, վարչապետ Ա. Մարգարյանի, արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի և միգրացիայի ու փախստականների վարչության պետ Գ. Եգանյանի հետ: Նա ծանոթացավ նաև ՄՄԿ-ի տեղի ծրագրերին և նախաձեռնություններին: Սուրբ Էջմիածնում նա այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսին:

Պարոն Սքեյնլիի այցի նպատակն էր քննարկել ՄՄԿ-ի և Հայաստանի կառավարության համար փոխադարձ հետաքրքրությունները կայացնող հարցերը և ծանոթանալ Հայաստանի միգրացիային առնչվող խնդիրներին: Պարոն Սքեյնլիի այցի արդյունքում փոխըմբռնում է ձեռք բերվել հետևյալ խնդիրների առնչությամբ:

Միգրացիայի կառավարում

Սիճեյն այս տարվա վերջը ՄՄԿ-ն ջանադրաբար կփորձի անկանոն միգրացիան կանխելուն և ելքի երկրներից անկանոն միգրանտների կամավոր վերադարձին ու կայուն վերաինտեգրացմանը օժանդակելու նպատակով հանդիպում կազմակերպել միգրանտների ելքի և ընդունող երկրների միջև (ներառյալ Հայաստանի Հանրապետությունը) քննարկելու համագործակցության և գործունեության շրջանակները:

Միգրացիոն կառավարման ոլորտում կադրային բազայի ամրապնդում: ՄՄԿ-ն և Հայաստանի կառավարությունը այս կարևոր ծրագրի հետագա ընթացքը նախանշելու նպատակով առկա համաձայնագրում անհրաժեշտ փոփոխություններ կկատարեն՝ միջև այս տարվա վերջը ստորագրելով մի համաձայնագիր:

Միգրանտների կազմակերպված անօրինական տեղափոխումների կանխարգելում: Ավարտելով այս տարի Հայաստանից միգրանտների կազմակերպված անօրինական տեղափոխումների բնույթի և ծավալի բացահայտմանը նվիրված ուսումնասիրությունը՝ ՄՄԿ-ն և ՀՀ կառավարությունը կքննարկեն միգրանտների կազմակերպված անօրինական փոխադրումների կանխարգելմանն ու կրճատմանն ուղղված միջոցները, ներառյալ նաև տեղեկատվական քարտզարկավների կազմակերպումը:

Միգրացիոն տեղեկատվություն: ՄՄԿ-ն միջոցներ կծեռնարկի աջակցելու Հայաստանի կառավարությանը միգրացիոն հոսքերի վերաբերյալ հավաստի տվյալների ձեռքբերման հարցում: Այս ուղղությամբ ՄՄԿ-ն արդեն ուսումնասիրություն է կատարել և ՀՀ կառավարությանը ներկայացրել առաջարկներ ՄՄԿ-ի աջակցությամբ և միջազգային ընդունված փորձին համապատասխան սահմանային կառավարման լայնածավալ տեղեկատվական համակարգ ստեղծելու վերաբերյալ:

Միգրացիոն սեկտորի հասարակական կազմակերպությունների կադրային բազայի ամրապնդում: ՄՄԿ-ն, մասնավորապես անօրինական փոխադրումների դեմ ուղղված իր ծրագրի շրջանակներում, կշարունակի աջակցել այս ոլորտին Հայաստանի տարբեր մարզերում:

Փոքր ձեռնարկատիրության զարգացում

ՄՄԿ-ն գործունե կերպով կփորձի ապահովել այս արդյունավետ ծրագրի՝ որպես որոշակի չափանիշներով ընտրված փախստականների, տեղահանված անձանց, վերադարձող միգրանտների և ցածր եկամուտով ընտանիքները հասարակությունում ինտեգրացնելու և ինքնահաստատվելու միջոցի, իրագործման շրջանակների ընդլայնումը:

Հետհավանարության փուլի ծրագրեր

Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանը հաջորդող գործունեություն: ՄՄԿ-ն և Հայաստանի կառավարությունը կշարունակեն «հետկոնֆլիկտային» հնարավոր ծրագրերի նախապատրաստմանն ուղղված քննարկումները՝ պայմանավորված հակամարտության երկու կողմերին անհանգստացնող հարցերի շուրջ ձեռք բերված քաղաքական համաձայնությամբ:

Ծառայություններ սփյուռքում գտնվող Հայաստանի քաղաքացիների համար

ՄՄԿ-ն Հայաստանի կառավարությանը տեղեկությո կտրամադրի այս բնագավառում ՄՄԿ-ի փորձառության ու սփյուռքի համայնքների հետ համատեղ գործունեության մասին և կքննարկի այս ոլորտում համագործակցության հավանականությունը:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2000թ. մայիսի վերջից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և Հայաստանի կառավարության Միգրացիայի կարգավորման բնագավառում կադրային բազայի ամրապնդման ծրագրի շրջանակներում ՄՄԿ-ն կազմակերպել էր միջազգային փորձագետի կողմից Հայաստանում վիզաների, մուտքի-ելքի և սահմանային կառավարման տեղեկատվական գործընթացների գնահատում: Նպատակն էր օժանդակել օրինական ուղեւորներին, խոչընդոտել անօրինական միգրացիան և առաջարկներ տրամադրել սահմանային կառավարման համակարգը միջազգային փորձին համապատասխանեցնելու նկատառումով:

Այդ հաշվետվությունը տպվել ու տարածվել է հոկտեմբեր ամսին և ներկայացնում է բարելավմանն ուղղված 67 առաջարկներ՝ ձեռնարկվելիք միջոցառումների առաջիկա 24 ամսվա հստակ ժամանակացույցով, ներառելով օրենսդրական, ընթացակարգային, տեխնոլոգիական և ուսուցման ոլորտները:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը կաջակցի ՀՀ կառավարությանը առաջարկների իրագործման խնդրում և կհամագործակցի միջազգային այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Հայաստանի կառավարության համար առաջարկների իրականացումը կարելու է հետևյալ նկատառումներով.

1. Նախորդ տարվա ընթացքում հանրապետությունում արտագաղթի ծավալը դարձել է հասարակության, լրատվության միջոցների և կառավարության հիմնական մտահոգության առարկան: Եթե բնակչության արտագաղթի կամխումը դուրս է սահմանային կառավարման բնագավառից, ապա կատարելագործված միգրացիոն տեղեկատվական համակարգը հենց այդ ոլորտում է: Սահմանային վիճակագրությունը միգրացիոն տեղեկատվության երեք աղբյուրներից մեկն է, և առաջարկների իրագործումը միջազգային լավագույն փորձին համապատասխան կընդլայնի միգրացիոն կառավարման համակարգը սահմանի ցամաքային կետերում:
2. Գործընկերության և համագործակցության համաձայ-

նագիրը, որը կնքվել է Հայաստանի և Եվրամիության անդամ պետությունների միջև, արտահայտում է Հայաստանի համագործակցության պատրաստակամությունը՝ վերահսկելու և խոչընդոտելու անօրինական միգրացիան: Միաժամանակ տուրիզմը՝ որպես Հայաստանի զարգացման հեռանկարային ոլորտ ճանաչելու դեպքում ընդգծվում է սահմանային կառավարման և օժանդակության գործընթացներում պատշաճ հավասարակշռություն սահմանելու անհրաժեշտությունը: Հաշվետվությունն անդրադառնում է այս հարցերին վիզայի տրամադրման և տեսչական գործընթացներին վերաբերող բաժիններում և առաջարկներ անում էլ՝ ներկայացնելով միջազգային լավագույն փորձից:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՍԵԿՏՈՐԻ ԶԿ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան հոկտեմբերին կազմակերպել էր սեմինար անկանոն միգրացիայի և միգրանտների առողջապահության թեմաների համար հատկացված ութ փոքր դրամաշնորհային ծրագրերի իրականացման արդյունքները քննարկելու և հրապարակելու նպատակով: ՄՄԿ-ի նպատակներից մեկն է խթանել հասարակական կազմակերպություններին՝ զբաղվելու միգրացիոն հարցերով: Հաշվետվություն է պատրաստվել և ներկայացվել ինչպես Միգրացիայի և փախստականների հարցերով զբաղվող վարչությանը, այնպես էլ շահագրգիռ միջազգային կազմակերպություններին: Հիմնականում ստացվել են հետևյալ արդյունքները:

Անկանոն միգրացիա


Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան Հայաստանում իրականացվող տարանցիկ միգրացիայի վերաբերյալ տեղեկատվություն է հավաքել և կազմել է տվյալների շտեմարան երկրում գտնվող գոյության միջոցներ չունեցող անօրինական միգրանտների անվանացանկով: Տվյալները տարածվել են տեղեկատվական գրկույքների միջոցով, իսկ մարզերում քաղաքացիների համար կազմակերպվել են խորհրդատվություններ ընդունող երկրների միգրացիոն օրենսդրության վերաբերյալ, որպեսզի մարդիկ տեղյակ լինեն իրական վիճակին: Շիրակի մարզի ԶԿ կենտրոնը և **«Արեն» սոցիալ-հոգեբանական կենտրոնը** Գյումրիում հարցում են անցկացրել բացահայտելու համար միգրացիայի շարժառիթներն ու բնույթը: Արդյունքում պարզվել է, որ միգրանտների 88 տոկոսի համար վերջնամպատակակետ երկիրը Ռուսաստանն է, 8 տոկոսի համար՝ Արևմտյան եվրոպան և 4 տոկոսի համար՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Հարցումը ցույց է տվել, որ միգրանտների 39 տոկոսը աշխատունակ տարիքի տղամարդիկ են, իսկ 28 տոկոսը՝ աշխատունակ տարիքի կանայք: Մնացածը երեխաներ են (30%) և տարեցներ (4%): **«Գործարար կին»** և **«Ջարթոնք 89»** կազմակերպությունները հարցում են անցկացրել 300 կանանց շրջանում: Ավելի քան 50 տոկոսը մեկնել են արտասահման ցածր որակավորման աշխատանքներ կատարելու համար, 23 տոկոսը՝ զբաղվելու փոքրածավալ առևտրով, իսկ 6 տոկոսը ներգրավվել է մարմնավաճառության մեջ: Արտասահման մեկնածների 40 տոկոսն իր ճամփորդությունը կազմակերպել է միջնորդների միջոցով, որոնց մատուցած ծառայությունները մեծ մասը անբավարար է գնահատում կամ էլ իրեն խաբված է համարում: Մեկնողներից 50 տոկոսի հետ նախապես կնքվել է աշխատանքային պայմանագիր, որոնց կեսից ավելին հետագայում խախտվել է գործատերերի կողմից: Հիմնական խախտումներից են նախապես առաջարկված աշխատանքից տարբեր աշխատանք տրամադրելը և ավելի ցածր վարձատրելը: Չնայած այդ բոլոր դժվարություններին՝ հարցված կանանց կեսից ավելին իր ժամանակավոր կաջությունը արտասահմանում համարել է հաջողված, իսկ մեկ քառորդը իր կենսականակարգակի աճ է նկատել: Հոգեբանի կողմից հետախոսային խորհրդատվություն է ապահովվել 245 զանգահարողներից 64 տոկոսի մոտ հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ են ախտորոշվել:

Միգրանտների առողջապահություն

«Ապագա սերունդ» ԶԿ-ն ղեկավարել է կանանց առողջապահության և վերարտադրողական հարցերի մասին առողջապահական կրթարշավը Վարդենիսի շրջանի փախստականներով և միգրանտներով ունեցող ընտանիքներով բնակեցված չորս գյուղերում: Միջոցառումներ են կազմակերպվել ծնունդների վերահսկման, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ընտանեկան բռնությունների մասին իրազեկության ապահովման ուղղությամբ: Ծրագրի իրականացմանը նախորդած և հաջորդած հարցումները զգալի փոփոխություն են արձանագրել գյուղաբնակ կանանց տեղեկացվածության աստիճանի և վերաբերմունքի մեջ: Կանանց նաև զինելոլոգիական փախորդչի խորհրդատվություն և բուժում ստանալու հնարավորություն էր ընձեռնվել: **«Առաքելություն Հայաստան»** և **«Բնակչության զարգացման հայկական բարեգործական հիմնադրամ»** կազմակերպությունները, ի նպաստ էջմիածնի համայնքային կենտրոններում բնակվող փախստականների, ուսուցանել են առողջապահության ոլորտի աշխատակիցներին և համայնքների ղեկավարների շրջանում բարձրացրել վերարտադրողական և կանանց առողջապահության հարցերի իրազեկության աստիճանը: 226 կանայք հնարավորություն ունեին զինելոլոգիական ստուգում և ըստ անհրաժեշտության բուժում ստանալ: 258 փախստականների հոգեբանական խորհրդատվություն ստանալու հնարավորություն էր տրվել: **«Հույս և օգնություն»** ԶԿ-ն ստեղծել էր Վստահության կենտրոն, որտեղ մարմնավաճառությամբ զբաղվողները կարող էին տեղեկատվություն ստանալ ՄԻԱԿ/ՉԻԱԶ-ի կանխարգելման մասին, ինչպես նաև հակաբեղմնավորիչներ և հիգիենայի պարագաներ: 162 մարմնավաճառներ են այցելել կենտրոն: 39 տոկոսը նշել է արտասահմանում՝ հիմնականում ԱՄԷ-ում և Թուրքիայում իր կատարած աշխատանքը: 17 տոկոսը նշել է վերջին երկու տարիների ընթացքում ունեցած սեռական հիվանդությունները, 22 տոկոսը նշել է, որ որեւէ սեռական հիվանդությամբ չի վարակվել, իսկ 61 տոկոսը որեւէ պատասխան չի ներկայացրել:

ՀԱՄԱՏԵՂ ԱՅՅԵՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐ

Նոյեմբերին ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը և Միգրացիայի միջազգային կազմակերպությունը համատեղ, սահմանապահների, անձնագրային վարչության և փախստականների հարցերով զբաղվող պաշտոնական ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել են Հայաստանի սահմանային վեց անցակետեր: Այդ այցերի նպատակն էր գնահատել սահմանային անցակետերում ապաստան հայցողների ընդունման, իմիգրացիոն վերահսկման և հաշվառման իրավիճակը և սահմանապահներին ու անձնագրային վարչության աշխատակիցներին ներկայացնել ելքի-մուտքի գործընթացների վերահսկման միջազգային լավագույն փորձը, 1951թ. Փախստականների մասին կոնվենցիան, որին միացել է նաև Հայաստանը, ինչպես նաև ԶԿ «Փախստականների մասին» օրենքը:



Լուսանկարը՝ ՄՄԿ-ի տրոնիակին

ՄԱԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՍՈՒԼԻՍԸ



Photo by Armine Halajyan

Այրն Վ.Տկաչուկը համառոտ խոսեց Հագարամյակի վերջին միջոցառումների և ՄԱԿ-ի օրվա կապակցությամբ կայանալիք հանդիսությունների մասին: ԳՊԾ-ն, օգտվելով առիթից, որոշ մանրամասներ հրապարակեց ՊԳԿ(FAO)/ԳՊԾ վերջին զեկույցից Հայաստանի երաշտի մասին:

Լրագրողներին մատուցվեցին տեղեկատվական առատ նյութեր, այդ թվում՝ գրքույկներ, թերթիկներ, մամուլ հաղորդագրություններ: ՄԱԿ-ի լրատուի վերջին համարը նույապես տրամադրվեց ներկաներին:

Սովի խնդիրն առանձնապես սուր է զարգացող երկրներում, որտեղ հիմնականում չի կարողանում օգտվել բավարար որակի սննդից: Աֆրիկայում ամեն տարի երեք երեխայից մեկը մահանում է սովից:

Նոր հազարամյակում աշխարհը սովից զերծ պահելու համար մենք պետք է անհապաղ գործողությունների դիմենք տարբեր ճակատներում, ոչ թե պարզապես կերակրենք սովյալներին, այլ վերացնենք սովի պատճառները: Լոկալ աճեցվող կերակրաբույսերի քանակը մեծացնելով՝ հնարավոր չէ վերացնել սովն ու պարենային անապահովությունը: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացող աշխարհում հիմա թերսնված երեխաներից չորսն ապրում են այնպիսի երկրներում, որոնք պարենի գերարտադրություն ունեն: Առաջիկայում առավել առաջնահերթ խնդիր է պարենը հասցնել նրանց ձեռքն ու բերանը, ովքեր դրա կարիքն զգում են հիմա, ովքեր անապահով մարդիկ են, կանայք ու երիտասարդ աղջիկներ, մեկուսացած գյուղական համայնքներ, հասարակության տնտեսապես առավել անապահով ազգային փոքրամասնություններ, պատերազմներից ու բնական աղետներից տուժածները:

Քոֆի Անան, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պարենի համաշխարհային օրվա ուղեւորից
16 հոկտեմբերի, 2000թ.

Աշխարհի բնակչության գրեթե կեսի օրական կենսական ծախսերը համարժեք են մոտավորապես երկու դոլարի: Այս աղքատիկ մասնաչափն անընդունելի է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գլոբալիզացիան բացեց աննախադեպ հեռանկարներ բարեկեցության ստեղծման համար: Գլոբալիզացիան կարող է դառնալ հզոր զենք՝ մեր պայքարն ուղղելով աղքատության դեմ: Մենք պետք է նկատի ունենանք այն պարագան, որ միայն համաշխարհային շուկայի գլոբալացումով չենք կարող հաղթել աղքատությանը, քանզի միայն տնտեսական աճը չէ աղքատության և անհավասարության վերացման գրավականը: Տնտեսական քաղաքականության հիմնական երաշխիքը պետք է լինի արդյունավետ սոցիալական քաղաքականությունը, որի նպատակակետն է «կրթությունը բոլորի համար, առողջությունը բոլորի համար և զենդեբային հավասարությունը»: Այս գրավականները դառնում են առաջնային, եթե չափազանց ենք, որ գլոբալացման պտուղները քառի համայն աշխարհի բնակչությունը, եթե մեր նպատակն է, որ մինչև 2015թ. կիսով չափ նվազի ծայրահեղ չքավորության մեջ ապրող մարդկանց թիվը:

Մինչդեռ ոչ մի վիճակագրական տվյալ չի կարող նկարագրել այն նվաստ, անկյալ, դաժան փորձություններով լի կյանքը, որը երկրագնդի աղքատ բնակչության ներկան է:

Քոֆի Անան, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Աղքատության վերացման միջազգային օրվա ուղեւորից
17 հոկտեմբերի, 2000թ.



Այս տարի հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի օրը նշվեց Աղքատության վերացման միջազգային տասնամյակի խորագրով: Միավորված ազգերի կազմակերպության տարեդարձը նշելու և ազգային մակարդակում աղքատության հարցերին անդրադառնալու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) և Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՓԳՀ) Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի հովանու ներքո պատրաստեցին «Աղքատությունը Հայաստանի բնակչության խոցելի խմբերում» խորագիրը կրող զեկույցը, որը ՄԱԿ-ի 55-րդ տարեդարձի օրը ներկայացվեց գիտությունների ազգային ակադեմիայում: Միջոցառումները կոորդինացվում էր ՄԱԿ-ի ՀՏԲ-ն:



ՄԱԶԾ-ն և ՓԳՀ-ի գրասենյակը, պատրաստելով այս զեկույցը, նպատակ ունեին ստույգ և անաչառ տեղեկություններ ստանալ անպաշտպան խմբերի՝ հիմնականում փախստականների և աղետի գոտու բնակչության աղքատության վիճակի վերաբերյալ, որոնք, ի տարբերություն տեղաբնակ ընտանիքների, անմիջականորեն տուժել են երկրաշարժից և հակամարտություններից: Տվյալները, որոնք վերլուծության բաղկացուցիչ մասն են, հավաքվել են անպաշտպան փախստականների, աղետի գոտու և տեղաբնակ ընտանիքների շրջանում 1999թ. հուլիս-օգոստոս

United Nations Resident Coordinator System

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 55-րդ ՏԱՐԵԴԱՐՁ

ամիսներին էքսպրես մեթոդով կատարված ուսումնասիրության արդյունքներից: Այդ մեթոդը, ի դեպ, հարմարեցվել է Հայաստանի պայմաններին ու յուրահատկություններին:

Հետազոտության համար այսպիսի մոտեցումների ընտրության հիմնական նպատակը ապահատարականացված սոցիալական ցուցիչների համապարփակ ամբողջությանը հասնելն է, որն ընդգծում է

Դահլիճում ու նախասրահում ցուցադրված էին «ՄԱԿ-ն աշխատում է...» շարքի ու ՀՏԲ-ի այլ պլակատներ: Բաշխվել է մոտ 800 կտոր գրականություն: Միջոցառմանը մասնակցում էին նաեւ կառավարության ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, միջազգային եւ ազգային հասարակական կազմակերպությունների ու ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:



ՄԱԿ-ի ՀՏԲ-ի մեկ այլ նախաձեռնություն էր հայերեն տեղեկատվական փաթեթների պատրաստումը, որոնք պարունակում էին 1) ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի գործակալությունների մասին փաստագրական տվյալներ, 2) ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի օրվա ուղերձը, 3) մանլո հաղորդագրություն «Աղքատության զեկույցի» մասին եւ 4) ՄԱԿ-ի հայաստանյան համակարգի սխեման: Փաթեթները բաժանվեցին մանուկ ներկայացուցիչներին:

Լուսանկարները՝ Մխիթար Խաչատրյանի

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐՈՒՄ



հետազոտված խմբերի աղքատության վիճակի տարբերություններն ու նմանությունները: Խնդիր է դրվել համապատասխան տեղեկատվական հիմք ապահովել կառավարության եւ դոնոր ծրագրերի ջանքերը լավագույնս ուղղորդելու համար: Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ այս զեկույցը գրվել է մի խումբ անկախ փորձագետների կողմից, տեղ գտած տեսակետներն ու կարծիքները բացառապես պատկանում են հեղինակներին եւ բնավ չեն արտացոլում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պաշտոնական դիրքորոշումը:

Ձեկույցի ներկայացման օրակարգում ընդգրկված էր նաեւ 15 թուրքերից մի տեսաժապավենի ցուցադրում՝ «Աղքատության դեմքը» խորագրով, որը նույնպես տեղական արտադրանք էր: Տեսաժապավենը գլոբալ ուղղությունների ու թվերի հենքի վրա ներկայացնում էր Հայաստանում աղքատության հիմնական առանձնահատկություններն ու ընդհանրական ընկալումները: Այն հեռարձակվել է ազգային հեռուստատեսությամբ Աղքատության վերացման միջազգային օրվա կապակցությամբ, եւ հեղինակային խումբը դրվատական գնահատական է ստացել հեռուստադիտողներից:

ԳԼԽԱՎՈՐ ԸԱՐՏՈՒՐԱՐԻ ՄԱԿ-Ի ՕՐՎԱ ՈՒՂԵՐՁԻՑ

Յոթ շաբաթ առաջ ձեռնառնողները՝ պետությունների եւ կառավարությունների ղեկավարները, աշխարհի բոլոր անկյուններից հավաքվեցին Նյու Յորքում՝ մասնակցելու Հազարամյակի գագաթաժողովին, քննարկելու 21-րդ դարում մեր առջեւ ծառայած մարտահրավերները եւ շարադրելու իրենց նպատակները Հազարամյակի հռչակագրում:

Նրանք պարտավորվեցին փրկել իրենց ժողովուրդներին պատերազմի արհավիրքից, ծայրահեղ եւ մարդկային կեղապրը խեղաթյուրող աղքատությունից, աղտոտված ու բնական հարստությունները սպառած մոլորակի վրա ապրելու սպառնալիքից: Նրանք երաշխավորեցին ժողովրդավարության եւ օրենքի գերակայության խրախուսումը, երեխաների եւ այլ խոցելի խմբերի շահերի սատարումը, ինչպես նաեւ համձն առան Աֆրիկայի հատուկ կարիքների բավարարումը: Նրանք խոստացան ավելի արդյունավետ դարձնել Միավորված ազգերի կազմակերպությունը՝ վերածելով այն հզոր գործիքի եւ ծառայեցնելով վերոհիշյալ նպատակների կատարմանը:

Բայց այնուամենայնիվ ամենամեծ պատասխանատվությունը ընկնում է իրենց՝ ղեկավարների եւ ձեռնարկների:

Ազգի առաջնորդները երբեմն ստիպված են կայացնել բարդ ու ժողովրդականություն չվայելող որոշումներ: Անհրաժեշտ է, որ նրանք հիշեն Հազարամյակի հռչակագրում անրապնդված առաջնահերթ խնդիրները, երբ պատրաստվեն հավասարազոր կարիքների եւ պահանջների միջեւ բաշխել ձեռնարկների ժողովուրդների ներդրած միջոցները:

Աշխարհի ղեկավարները պետք է միշտ հիշեն միմյանց տրված խոստումները: Նրանք պետք է շարունակեն համագործակցությունը թե պետական, թե արտասահմանյան գործընկերների՝ խորհրդարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, փորձագետների եւ համալսարանների, կամավորական խմբերի եւ մասնավոր ձեռնարկությունների հետ:

Թերեւս, Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդ, նրանք պետք է առաջնորդվեն վայելելով միայն ձեռնարկները:

ՄԱԿ-ի կանոնադրությունը գրվել է ձեռնարկների, եւ Հազարամյակի հռչակագիրը լույս ընծայելիս ձեռնարկները խոսում էին ձեռնարկների: Կերտապես միայն դուք կարող եք անել այնպես, որ Հռչակագիրը չդառնա միայն զեկույցի խոսքեր: Դուք եք այս խոստումների բուն իրագործողը եւ դուք եք այն ուժը, որ նոր դարն ավելի լավ կդարձնի, քան նախկինը:



ՆՈՐ ՕԹԵՎԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 21-ին Նոր Նորքի համայնքում կայացավ փախստականների համար կառուցված 11-հարկանի բնակելի շենքի շահագործման հանդիսավոր արարողությունը: Մասնակցում էին Հայաստանի կառավարության, միջազգային կազմակերպությունների և երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

Շենքը կառուցվել է YMCA միջազգային կազմակերպության միջոցով և ՄԱԿ-ի ՓԳՀՎ դրամական օժանդակությամբ: YMCA-ն ՄԱԿ-ի ՓԳՀՎ գործընկերն է փախստականների համար բնակարանների շինարարության ծրագրի իրականացման աշխատանքներում: Շենքը նախատեսված է 60 ընտանիքի համար: Համաձայն ՄԱԿ-ի ՓԳՀՎ և Հայաստանի կառավարության միջև կնքված պայմանագրի, 50 բնակարան տրամադրվել է փախստական ընտանիքների, իսկ մնացած 10-ը՝ տեղացիների:

Նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին ՄԱԿ-ի ՓԳՀՎ-ն ծրագրում է բնակելի շենք շահագործման հանձնել նաև Արարատի մարզի Արտաշատ քաղա-

քում: Շինարարական աշխատանքներն արդեն մոտենում են ավարտին, և մինչև նոր տարի փախստականների 44 ընտանիքներ կտեղափոխվեն նոր բնակարաններ:

Թեև ՄԱԿ-ի ՓԳՀՎ բյուջեի զգալի մասը հատկացվում է փախստականների համար բնակարանների շինարարության ծրագրին, այդ միջոցներն ակներեւաբար բավարար չեն փախստականներին բնակարանով ապահովելու համար, որոնցից շատերը ներկայումս ապրում են ժամանակավոր կացարաններում: Ֆինանսական պաշարների սահմանափակության պատճառով փախստականների համար բնակարանների շինարարության ծրագիրը հիմնականում նպատակաուղղված է առավել կարիքավորների (ծերերի, հաշմանդամների) ապահովմանը :

Հայաստանում իր ներկայացուցչության հիմնադրման ժամանակից ի վեր ՄԱԿ-ի ՓԳՀՎ միջոցներով փախստականների համար կառուցվել են մոտ 3000 քոթեջներ և բնակարաններ:

ԸՆՏՐՎԱԾ Ե ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՍԱՐԸ

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ներկայացմամբ Գլխավոր ասամբլեան հոկտեմբերի 25-ին մեծ հավանությամբ հռչակեց պրոֆեսոր Ռուուզ Լուբերսին ընտրեց ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատար:

Պրն Լուբերսի՝ նոր Գերագույն հանձնակատարի նշանակման վերաբերյալ հայտարարությունում ներկա Գերագույն հանձնակատարը ասաց, որ նա իր հետ գրասենյակ կբերի պետական գործչի աշխատանքային, ինչպես նաև մասնավոր սեկտորի, գիտական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բացառիկ հարուստ փորձ: 1982-1994թթ. իբրև Նիդեռլանդների վարչապետ՝ նա նպաստել է ՄԱԿ-ի ՓԳՀՎ հետ ամուր և տեսական կապերի ստեղծմանը (մասնավորապես նախկին Հարավսլավիայի հակամարտության դժվար օրերին): Կառավարությունը լքելուց հետո պրոֆեսոր Լուբերսը դասավանդել է Նիդեռլանդների Տիլբուրգ համալսարանում և Հարվարդի համալսարանի Տոն Քենեդու անվան կառավարման դպրոցում: Այժմ պրոֆեսոր Լուբերսը հանդիսանում է Գլոբուսի՝ Տիլբուրգի գլոբալիզացիայի և զարգացման ինստիտուտի նախագահը: Միաժամանակ պրոֆեսոր Լուբերսը հանդիսանում է Բնապահպանության համաշխարհային հիմնադրամի միջազգային նախագահը:

Ըստ տիկին Օգատայի, ընտրելով պրոֆեսոր Լուբերսին մեծ թվով արժանի թեկնածուներից՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը կատարեց իր խոստումը, այն է՝ որպես գերագույն հանձնակատար նշանակել փորձառու ղեկավարի:

Ս.թ. նոյեմբերի 1-ին հանդիպելով ՄԱԿ-ի ՓԳՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ պրն Ռուուզ Լուբերսն ասաց, որ իր համար անակնկալ էր, երբ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը իրեն առաջարկեց ստանձնել Գերագույն հանձնակատարի պարտականությունները: Պրն Լուբերսը նաև հայտնեց, որ ՄԱԿ-ի ՓԳՀ է գալիս «բոլորովին այլ աշխարհից», սապ պատմեց իր ընտանիքի և բիզնեսմենի, էկոնոմիկայի և առևտրի նախարարի, վարչապետի տասներկուամյա փորձի մասին այն ժամանակնե-

րում, երբ սառը պատերազմից հետո Եվրոպայի ինտեգրացիոն գործընթացը սկսեց արագանալ:

Պրն Լուբերսը իր կյանքը ներկայացրեց ինչպես ճանապարհորդություն գործարարությունից մինչև կառավարություն, իսկ վերջին տարիներին դեպի ավելի գործունե գերագավումը քաղաքացիական հասարակության մեջ: Պրն Լուբերսը ասաց նաև, որ օգտագործում է «նոր կառավարում» տերմինը, որպեսզի ընդգծի այն դերը, որ ունի ներկայում քաղաքացիական հասարակությունը. օրինակ՝ ազդեցությունը մասնավոր ձեռնարկությունների վրա, որպեսզի վերջիններիս առաջնային խնդիրը լինի այն, որ ոչ միայն օրենքի շրջանակներում շահույթ ստանալու նպատակ հետապնդեն, այլև ընդլայնեն իրենց մասնակցությունը սոցիալական հարցերի լուծման գործում:

Եզրափակելով հանդիպումը՝ Գերագույն հանձնակատարը՝ տիկին Օգատան, նշեց, որ փախստականների հետ աշխատանքը գրասենյակին հնարավորություն է տալիս է անմիջական կապ հաստատել քաղաքացիական հասարակության հետ: Այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի այլ գործակալությունները ջանում են սահմանել քաղաքացիական հասարակության հետ իրենց հարաբերությունները, ՄԱԿ-ի ՓԳՀ-ն արդեն իսկ ձեռք է բերել հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու մեծ փորձ: Տիկին Օգատան շեշտեց սակայն, որ այսօր հասարակական կազմակերպությունները պետք է ապացուցեն իրենց ունակությունները և առավելությունները նրցակցային միջավայրում, մյուս ոչ կառավարական կազմակերպությունների նկատմամբ: Գերագույն հանձնակատարը հույս հայտնեց, որ պրն Լուբերսը ոչ միայն կբարելավի ՄԱԿ-ի ՓԳՀ հարաբերությունները հասարակության հետ, այլև կնպաստի, որպեսզի գրասենյակը դառնա նոր հազարամյակի օրինակելի հասարակական կազմակերպություն:

Պարոն Լուբերսը գերագույն հանձնակատարի պարտականությունները պաշտոնապես կստանձնի 2001թ. հունվարից:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը մոտեցել է իր պատմության շրջադարձային կետին: Ունաք կարող են ասել, թե 50 տարին այնքան էլ շատ չէ կազմակերպության համար: ՄԱԿ-ի ՓԳՅ-ն միշտ էլ բոլոր ճգնաժամային իրավիճակներում գործնականորեն գտնվել է առաջավոր դիրքերում եւ այնպիսի վիթխարի փորձ է կուտակել մարդկային տառապանքները նվազեցնելու գործում, որ նրա գործունեության յուրաքանչյուր տարի գուցե եւ երկուսի գին ունի: Այսօր, երբ թվում է, թե աշխարհը վատաբար գնում է գլոբալացման, գերարդիական տեխնոլոգիաների, որոնց մասին կարելի էր կարդալ միայն գիտաֆանտաստիկ վեպերում, ճգնաժամները պետք է ավելի պակասեին եւ մարդիկ շատ ավելի հանդուրժող դառնային: Սակայն, ցավոք, այդպես չէ: Ընդհակառակը, աշխարհն ավելի ու ավելի է բեւեռացվում աղքատ եւ հարուստ երկրների, հարուստ երկրները միջոցներ են տրամադրում, իսկ աղքատ երկրներն ապրում են այդ փոխառությունների հաշվին: Աղքատ երկրների բնակչությունը պաշտպանության եւ լավ կենսապայմանների փնտրտուքով ձգտում է տեղափոխվել հարուստ երկրներ:

Աղքատությունը կլանել է երկրագնդի կեսը: Շատ դեպքերում այն դառնում է ճգնաժամային իրավիճակների աղբյուր եւ պատճառ՝ հարուցելով մարդու իրավունքների զանգվածային խախտումներ ու բռնություն: Ոչ ոք չգիտի, թե դեռ որքան կհարատելի ՄԱԿ-ի ՓԳՅ-ն: Սակայն ակնհայտ է, որ ՓԳՅ-ն հիմնադրումից հինգ տասնամյակ անց էլ իրադրությունը աշխարհում չի փոխվել, եթե չի վատթարացել՝ հանգեցնելով հարյուր հազարավոր մարդկանց բռնի տեղահանության եւ այդպիսով մեծացնելով կազմակերպության բեռը: Սակայն եթե անգամ ամբողջ աշխարհում ընդամենը մի փոքր խումբ փախստական մնա, ՄԱԿ-ի ՓԳՅ-ն պետք է գոյություն ունենա համուն նրանց:

ՄԱԿ-ի ՓԳՅ-ի 50-ամյա տարելիցը եւս մեկ հնարավորություն է միջազգային հանրության ուշադրությունը փախստականների եւ բռնի տեղահանվածների խնդրի վրա սեւեռելու համար: Կազմակերպությունը հիմնադրման հոբելյան չի տոնում, այլ արժանի է մատուցում, փառաբանում է փախստականներին իրենց արիության համար, կամ, եթե կարելի է ասել, «տոնում է փախստականներին»:

Փախստականներ... Ուշագրավ է, որ երբ հարցնում ես հասարակ մարդկանց, թե ինչ զգացումներ է իրենց մեջ ծնում «փախստական» բառը, չգիտես ինչու, միշտ պատասխանը բացասական է լինում, ինչպես, օրինակ, պատերազմի, կոտորածների, ավերածությունների հարցում: Անշուշտ, չի կարելի չհամաձայնվել, բայց եւ չի կարելի անտեսել, որ այդ չարիքներն են հենց փախստականին փախստական դարձնում: Իսկ հետո՞: Այո, մենք ընդունում ենք այդ մարդկանց, որովհետեւ նրանք ստիպված են եղել փախչել իրենց երկրից, բայց արդյո՞ք ընդամենը սնունդ, հագուստ եւ օթեւան պիտի տրամադրենք նրանց եւ փոխարենը ոչինչ չակնկալենք: Իրո՞ք պիտի մտածենք, թե ընդունելով փախստականներին՝ նոր բեռ ենք ստանձնում: Չէ որ այն երկրների համար, որոնք ընդունում են փախստականներին, դա ոչ միայն հսկայական ծախսեր է ենթադրում, այլեւ վիթխարի ներդրումներ նրանց տնտեսության եւ մշակույթի մեջ: Մի առիթով ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեսպան պրոֆ. Մեյլորը ասել է, թե փախստականները հարստությունն են այն երկրների, որոնք իրենց ապաստան են տվել: Այս միջոց ճշմարիտ է, եւ պատահական չէ, որ Միացյալ Նահանգներն այսօր առաջատարն է աշխարհում տնտեսական զարգացման մակարդակով:

Սիսավաթիկ անհրաժեշտ է միշտ նկատի ունենալ այն դրական ավանդը, որ բերում են փախստականներն իրենց ընդունած հասարակությանը: Սա ՄԱԿ-ի ՓԳՅ-ի 50-ամյակի կարգախոսն է, այն սկզբունքը, որը պետք է դրված լինի փախստականների եւ բռնի տեղահանված անձանց նկատմամբ վարվող քաղաքականության հիմքում:

ՄԱԿ-Ի ՓԳՅ 50-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անցած երեք ամիսների ընթացքում ՄԱԿ-ի ՓԳՅ Հայաստանի գրասենյակը կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ նվիրված ՓԳՅ-ի 50-ամյակին:

Հոկտեմբերին «Արեգ 73» երիտասարդական կազմակերպության հետ համատեղ, երկրի տարբեր շրջանների ավագ դասարանների աշակերտների մասնակցությամբ ՄԱԿ-ի ՓԳՅ-ում անցկացրեց ինտելեկտուալ խաղ: Եզրափակիչ խաղը կայացավ Երևանի թիվ 69 դպրոցում: Թե՛ս պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեցին թիվ 69 դպրոցի բարձր դասարանցիները: Մրցումներին ակտիվորեն մասնակցեցին ինչպես տեղացի դպրոցականները, այնպես էլ փախստականներ: Խաղը մեծ հետաքրքրություն առաջացրեց դեռահասների շրջանում եւ յուրատեսակ կամուրջ դարձավ փախստականների եւ տեղացիների միջև: Հաղթողները, ինչպես նաեւ մյուսները, ովքեր մասնակցեցին խաղին, ստացան նվերներ եւ մրցանակներ:

Հոկտեմբերի վերջին «Արեգ 73»-ի ակտիվիստները կազմակերպեցին նաեւ մարաթոն Աբովյան-Նոր Հաճն երթուղով: Վազքարշավին, որը նույնպես նվիրված էր ՄԱԿ-ի ՓԳՅ-ի 50-ամյակին, մասնակցեցին ավելի քան 80 պատանիներ եւ աղջիկներ: Այդ միջոցառումը նաեւ քարոզչական բնույթ ունեւր եւ նպատակ էր հետապնդում ներգրավել երիտասարդ փախստականներին հասարակական ձեռնարկներում, վերացնել այն հոգեբանական խոչընդոտը, որ գոյություն ունի փախստականների եւ տեղացի հասակակիցների միջև: Ի դեպ, հինգ կիլոմետրանոց երթուղին առաջինը հաղթահարեց Արամ Բաղդասարյանը, փախստական, որն ապ-


րում է երեւանի հանրակացարաններից մեկում: Մարաթոնի մասնակիցները տանում էին պաստառներ՝ «Աշխարհ՝ առանց փախստականների», «Ո՛չ պատերազմներին եւ բռնությանը» կարգախոսներով:

50-ամյա տարելիցի տոնակատարության շրջանակում կազմակերպվեց «Իմ ապագան Հայաստանում» թեմայով շարադրության մրցույթ, որի նախաձեռնողը դարձյալ «Արեգ 73» կազմակերպությունն էր: Մրցույթին մասնակցեցին տարբեր տարիքի 25 փախստականներ: Աշխատանքները գնահատեց «Արեգ 73» կազմակերպության եւ ՄԱԿ-ի ՓԳՅ ներկայացուցիչներից կազմված ժյուրին: Ուշագրավ է, որ դրանց մեծ մասը տոգորված էր ապագայի լավատեսությամբ: 25 աշխատանքներից հինգը լավագույն ճանաչվեց: Մրցույթի բացարձակ հաղթող դարձավ Ալբինա Կարապետյանը: Լավագույն շարադրություններն ընթերցվելու են նաեւ դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի ՓԳՅ 50-ամյակին նվիրված համաժողովում, որը կկայանա ՄԱԿ-ի Երևանի գրասենյակում:

Թեւեւ «Երիտասարդությունը եւ ակտիվ քաղաքացիական մասնակցությունը» ծրագիրը, որի շրջանակներում «Արեգ 73» երիտասարդական կազմակերպությունն անցկացրեց վերոհիշյալ բոլոր միջոցառումները, դեռ ավարտված չէ, այսօր իսկ կարելի է մի կարելու եզրակացություն անել. ի տարբերություն ավագ սերնդի, երիտասարդ փախստականներն իրենց ապագան կապում են Հայաստանի հետ եւ ձգտում են հնարավորինս իրենց ավանդը բերել հայրենիքի բարգավաճման գործին:

ՅԵՔԻԱԹԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ

2000թ. հոկտեմբերի 20-ին Տիկնիկային գործիչների միջազգային միության հայկական կենտրոնը՝ «UNIMA-Հայաստանը», «Յեքիաթի համաշխարհային օր» խորագիրը կրող տոնախմբություն էր կազմակերպել: Այդ օրը հազարավոր երեխաներ եւ ծնողներ հնարավորություն ունեցան մասնակցելու 5 ժամ տեւողությամբ տոնահանդեսի, որը սկիզբ առնելով Խնկո-Ապրո անվ. գրադարանից, ընդգրկեց Երեւանի Կարապի լճի եւ Ազատության հրապարակի ողջ տարածքը: Աշխարհի հեքիաթների սիրված հերոսները, ուրախություն եւ բազում անակնկալներ պարգևեցին երեխաներին, ներգրավեցին նրանց հետաքրքիր խաղերի մեջ: Միջոցառմանը



ֆինանսական օգնություն էր տրամադրել ՄԱԿ-ի ՓԳՅ-ն (իր 50-ամյա հոբելյանի տոնակատարության շրջանակներում) եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ը: Վերջինիս օժանդակությամբ տոնախմբության հյուրեր դարձան նաեւ Վարդաշենի հատուկ դաստիարակության դպրոցի, Երեւանի թիվ 2, 8 եւ թիվ 11 գիշերօթիկ դպրոցների կարիքավոր երեխաները: Հրապարակում տեղի ունեցած զանազան ներկայացումներին մասնակցեցին նաեւ փախստական երեխաները: Ծրագրի հիմնական մասը «Ոսկե բանալի» մրցույթի հաղթողների ելույթներն էին: Փառատոնը ավարտվեց անմոռանալի «Ծովամարտով» Կարապի լճում եւ գունագեղ հրավառությամբ:



ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԵԿՈՒՅՑԻՆ

Ս.բ. նոյեմբերի 22-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ կազմակերպել էր երեխայի իրավունքների մասին զեկույցին նվիրված սեմինար:

Սեմինարի նպատակն էր նպաստել երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի եւ Հայաստանում դրա վերահսկման մեխանիզմների ավելի խորը ընկալմանը: Սեմինարին մասնակցեցին ազգային պարբերական զեկույցի համար պատասխանատու աշխատախմբի անդամները: «ՅՈՒՆԻՍԵՖ-ի դերը զեկույց պատրաստելու գործընթացն ապահովելն էր: Հուսով ենք, որ սեմինարը պատեհություն է ընձեռել աշխատախմբի բոլոր անդամներին համատեղ աշխատելու եւ քննարկումներ վարելու նախքան 2001թ. առաջին պարբերական զեկույցի պատրաստումը: Սա կարելու առաջադրանք է, քանի որ Հայաստանը, 1992թ. միանալով կոնվենցիային, պարտավորվեց որպես երկրի օրենք կիրառել այդ փաստաթղթի դրույթները»,- սեմինարի բացման ժամանակ ասաց ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար Գլորիա Ֆերնանդեսը:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հանձնաժողովի զեկույցը եւ ընտանիքի ու անչափահասների մասին օրենսդրության մասնագետ պրոֆ. Ջակոբ Էգբերտ Դոբեր իր փորձն է հաղորդել մասնակիցներին հատուկ ընդգծելով ԵԿ-ի կիրառման մասին Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ հանձնաժողովի եզրափակիչ դիտողությունները, ինչպես նաեւ առաջին պարբերական զեկույցի պատրաստման գոր-



Լուսա. Փերման Ավագյան/ՅՈՒՆԻՍԵՖ

ծընթացը: Հայաստանը վավերացրել է երեխայի իրավունքների մասին կոնվենցիան 1992թ. հունիսի 1-ին, իսկ նախնական զեկույցը Հայաստանի կողմից ներկայացվել է 1997թ.: Երեխայի իրավունքների հանձնաժողովը վերանայել է այդ նախնական զեկույցը եւ իր եզրափակիչ դիտողություններում նշել է, որ «զեկույցում առկա են եղել եական բացթողումներ կատարման ընդհանուր միջոցների, ընդհանուր սկզբունքների, քաղաքացիական իրավունքների եւ ազատությունների, ինչպես նաեւ հատուկ պաշտպանության միջոցների վերաբերյալ տեղեկատվության տեսակետից»: Սակայն հանձնաժողովի կողմից դրական արձագանքի է արժանացել 1996թ. ընդունված Երեխաների իրավունքների մասին օրենքը: «Դա ցույց է տալիս Հայաստանի պատրաստակամությունը իրագործելու կոնվենցիայում նախատեսված պարտավորությունները,-ասաց պրոֆ. Ջակոբ Էգբերտ Դոբեր:-Այնուամենայնիվ Հայաստանը պետք է ջանքեր գործարդի լիովին համապատասխանեցնելու իր օրենսդրությունը կոնվենցիայի

դրույթներին»:

Աշխատախմբի քննարկումները նպաստեցին տեղեկատվության, ինչպես նաեւ երեխայի իրավունքների վերահսկման ուղղված առավել արդյունավետ մոտեցումների հայտնաբերման վերաբերյալ եզրափակիչ դիտողությունների հիման վրա ձեռք բերված փորձի փոխանակմանը:

Պարբերական վերահսկողությունը եւ զեկույցում երեխայի իրավունքների վերաբերյալ առանձնապես նշանակալից է դարձել, քանի որ աշխարհի բոլոր ազգերը ներկայումս վերանայում են 10 տարի առաջ երեխաներին նվիրված համաշխարհային զագաթնաժողովում հաստատված դրույթները եւ պատրաստվում են 2001թ. սեպտեմբերին կայանալիք երեխաներին նվիրված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նիստին, որտեղ կհաստատվեն նոր գերակայություններն ու նպատակները աշխարհի բոլոր երեխաների բարեկեցությունը ապահովելու նպատակով: «ՅՈՒՆԻՍԵՖ-ը աջակցում է ՀՀ կառավարությանը տասնամյակի գործընթացում հավաքագրելով համապատասխան տվյալներ եւ վերլուծելով ունեցած նվաճումները, նպաստում է Համաշխարհային հռչակագրի դրույթների կատարմանը եւ Գործողությունների նախագծի իրականացմանը,-հայտարարեց Գլորիա Ֆերնանդեսը իր ելույթում:-Որպես ենք նշել, որ Հայաստանում տասնամյակի եզրափակման գործընթացը գուճակցվում է ԵԿ-ի վերաբերյալ զեկույցմանը»:

Միջոցառումը կայացավ Եվրամիության աջակցության շնորհիվ:

Աշխատախմբերի քննարկումները նպաստեցին տեղեկատվության, ինչպես նաև երեխայի իրավունքների վերահսկմանն ուղղված առավել արդյունավետ մոտեցումների հայտնաբերման վերաբերյալ եզրակահանգի դիտողությունների հիման վրա ձեռք բերված փորձի փոխանակմանը:

Պարբերական վերահսկողությունը եւ գեկուցումը երեխայի իրավունքների վերաբերյալ առանձնապես նշանակալից է դարձել, քանի որ աշխարհի բոլոր ազգերը ներկայումս վերանայում են 10 տարի առաջ երեխաներին նվիրված համաշխարհային գազաթնաժողովում հաստատված դրույթները եւ պատրաստվում են 2001թ. սեպտեմբերին կայանալիք երեխաներին նվիրված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նիստին, որտեղ կհաստատվեն նոր գերակայություններն ու նպատակները՝ աշխարհի բոլոր երեխաների բարեկեցությունը ապահովելու նպատակով: «ՅՈՒՆԻՍԵՖ-ը աջակցում է ՀՀ կառավարությանը տասնամյակի գործընթացում հավաքագրելով համապատասխան տվյալներ եւ վերլուծելով ունեցած նվաճումները, նպաստում է Համաշխարհային հռչակագրի դրույթների կատարմանը եւ Գործողությունների նախագծի իրականացմանը, հայտարարեց Գլոբալ Ֆերմանդեսն իր ելույթում: Ուրախ ենք նշել, որ Հայաստանում տասնամյակի եզրական գործընթացը զուգակցվում է ԵԿԿ-ի վերաբերյալ գեկուցմանը»:

Միջոցառումը կայացավ Եվրամիության աջակցության շնորհիվ:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՆՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՍՆՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՀՍՎԱՍՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1999թ. առողջապահության նախարարության եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպված սեմինարը՝ նվիրված սնուցման խնդիրներին, բացահայտեց սնուցման վերահսկման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Նման համակարգը կնպաստի հասարակական առողջապահության ոլորտում ծրագրերի պլանավորմանը եւ գնահատմանը:

Սնուցման նորմալ վիճակի պահպանումը անչափ կարեւոր է անհատի կյանքի բոլոր փուլերում: Դրա ապահովվումն անհրաժեշտ է, որպեսզի անհատը կարողանա հաղթահարել բոլոր այն հիվանդությունները, որոնք ընդգրկված են Հայաստանի հասարակական առողջապահության գերակայությունների մեջ: Հղիության ընթացքում անեմիան կարող է բացասաբար ազդել պտղի աճի եւ երկաթի վիճակի վրա: Երեխաների պատշաճ սնուցումը անհրաժեշտ է իմունիտետի ամրապնդման եւ առողջ ֆիզիկական ու մտավոր զարգացման համար: Հղիության եւ վաղ մանկության շրջանում ոչ ճիշտ սնուցումը քրոնիկ հիվանդությունների առաջացման նախադրյալներ է ստեղծում հասուն տարիքում: Առողջ ապրելակերպի խրախուսումը կարող է զգալիորեն նվազեցնել հիվանդացության եւ մահացության ցուցանիշները:

Ս.թ. նոյեմբերին ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից հրավիրվել էին միջազգային փորձագետներ՝ օգնելու սնուցման հսկողության համակարգի մշակմանը, հիմնվելով հասարակական առողջապահության գերակայությունների վրա: Այս համակարգը կհսկի քրոնիկ հիվանդություններից մահացության ցուցանիշը հասուն տարիքում, սուր վարակիչ հիվանդություններից մահացության ցուցանիշը երեխաների շրջանում եւ քրոնիկ ու սուր վարակիչ հիվանդությունների հիվանդացության ցուցանիշը: Կհսկի նաև սննդատեսակների եւ սննդանյութերի ընդունումը՝ որպես ռիսկի գործոն: 2001թ.-ից Սյունիքի մարզում կգործի փորձնական համակարգ. արդյունքներն ամփոփելուց հետո այն կկիրառվի ամբողջ երկրում:

Հատուկ ուշադրություն կհատկացվի Սյունիքում մեծ տարածում ունեցող յոդի անբավարարության հիվանդությունների հսկմանը: Միջազգային հանրությունը նպատակ է դրել վերացնել այդ հիվանդությունները ադի համընդհանուր յոդացման միջոցով՝ պայքարելով միակ կանխարգելիչ մտավոր թերզարգացման դեմ: ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ձեռնարկվել է Ավանի աղի գործարանի աշխատանքի եւ ազգային յոդի անբավարարության հիվանդությունների ծրագիրը, որի իրականացման գնահատումը ցույց տվեց Հայաստանի առողջապահության նախարարության եւ աղի գործարանի աշխատակիցների մեծ պատրաստակամությունը՝ վերացնելու այդ հիվանդությունները: Այնուամենայնիվ կարիք կա բարենորոգելու ազգային ծրագրի որոշ ուղղություններ, այն է՝ հասարակության իրազեկություն, տեղեկատվություն եւ անասունների ապահովում յոդացված աղով:

ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

ՅՈՒՆԻՍԵՖ-ը ներմուծեց եւ բաշխեց հետեւյալ բժշկական պարագաները.

- 50 ամբուլատոր բժշկական հավաքածու, ըստ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցուցակի, ավելի քան 200 ամբուլատորիաներից ամենակարիքավորներին:
- 55 մանկաբարձական հավաքածու բոլոր ծննդատներին (1-ական յուրաքանչյուր ծննդատանը):

Երկաթի ֆոլատ, ըստ տարեկան պահանջարկի, բոլոր կանանց կոնսուլտացիաներին եւ ծննդատներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը ապահովեց 6 նպատակային պատվաստանյութերի (պոլիոմիելիտ, տուբերկուլյոզ, կարմրուկ, կապույտ հազ, փայտացում եւ դիֆթերիա) երկրի տարեկան պահանջարկը: Առողջապահության նախարարության խնդրանքով ՅՈՒՆԻՍԵՖ-ը ապահովեց նաև հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանյութով: Պատվաստանյութերը բաշխվեցին առողջապահության նախարարության Հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության կայանի միջոցով:



Լուս. Մ.Մատա-Լանգլուայի



Լուս. Չերման Ավագյան/Յունիսեֆի

Խորհրդային կարգերի ժամանակ մանկապարտեզները հիմնականում ֆինանսավորվում էին պետության կողմից: Անկախությունից հետո այս հաստատությունների ֆինանսավորման եւ ղեկավարման պատասխանատվությունը ընկավ տեղական իշխանությունների վրա, որոնք պատրաստ չէին ստանձնելու այս նոր դերը: Ծառայության վճարովի համակարգը ծնողներին առիթ տվեց վերանայել իրենց երեխաների մանկապարտեզ հաճախելիությանը: Մանկապարտեզ հաճախող 3-6 տարեկան երեխաների տոկոսը 65.2-ից (1989թ.) իջավ մինչեւ 32.4 (1996թ.): Գոյություն չունեն մանկապարտեզներին զուգահեռ այլընտրանքային ծառայություններ: Վաղ մանկական զարգացման բնագավառում մշակված չէ հստակ պետական քաղականություն եւ ռազմավարություն: Վերջին շրջանի ֆինանսավորման պակասը բացասական է անդրադարձել նաեւ նախադպրոցական հաստատություններում աշխատանքային պայմանների եւ խնամքի որակի վրա:

Նախադպրոցական կրթության որակի բարձրացման նպատակով ՅՈՒՆԻՍԵֆ-ը կազմակերպեց մի սեմինար՝ հրավիրված փորձագետի մասնակցությամբ: Նպատակն էր վերապատրաստել նախադպրոցական համակարգի հիմնական վերապատրաստողների խումբ:

Վերապատրաստման համար ստեղծվեց նյութերի ժողովածու, որի մեջ ընդգրկված են վաղ մանկական զարգացման ոլորտի հիմնական թեմաները, դրույթները, ուղեցույցները եւ սեմինարի ծրագիրն ու առաջադրանքները: Երեւանում տեղի ունեցած սեմինարի հիմնական խնդիրն էր նախադպրոցա-

կան համակարգում աշխատող մասնագետների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացումը: Սեմինարի ընթացքում օգտագործվեց ինտերակտիվ ուսուցման մեթոդը, ինչը հնարավորություն տվեց մասնակիցներին էլ ավելի խորը գնահատելու այդ մեթոդի առավելությունները: Ընդգրկված 24 մասնակիցների թվում էին մարզերի մանկապարտեզների մանկավարժներ, կրթության եւ գիտության նախարարության եւ Հայաստանի առաջադեմ բուհերի ներկայացուցիչներ: Արդյունքում ստեղծվեց նախադպրոցական համակարգում աշխատող մասնագետների մի ցանց: Վերապատրաստված մասնագետներն արդեն անց են կացրել 6-օրյա դասընթացներ Սյունիքի եւ Տավուշի շրջանների մանկապարտեզների 150 մանկավարժների եւ տնօրենների համար:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՋՆԵՐՈՎ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Ս.թ. նոյեմբերին ՅՈՒՆԻՍԵֆ-ը սոցիալական ապահովության նախարարության հետ համատեղ կազմակերպեց սեմինարներ որդեգրման եւ խնամակալության նոր իրավական նորմերի վերաբերյալ: Սեմինարին մասնակցեց 120 մասնագետ, այդ թվում սոցիալական ապահովության նախարարության աշխատակիցներ, մարզերի ղեկավարներ, սոցիալական աշխատողներ, անչափահասների հանձնաժողովների անդամներ, մանկատների եւ ծննդատների ներկայացուցիչներ:

ՅՈՒՆԻՍԵֆ-ը շարունակեց նաեւ իր օգնությունը հատուկ հաստատություններին՝ կազմակերպելով 6-օրյա դասընթաց ժեստերի լեզուն ուսուցանելու համար: Սեմինարին մասնակցեցին 25 մասնագետ-մանկավարժներ Երեւանի խուլ-համր երեխաների դպրոցից եւ 5 մասնագետ՝ մարզերից:

ՅՈՒՆԻՍԵֆ-ը շարունակեց նաեւ իր օգնությունը հատուկ հաստատություններին՝ կազմակերպելով 6-օրյա դասընթաց ժեստերի լեզուն ուսուցանելու համար: Սեմինարին մասնակցեցին 25 մասնագետ-մանկավարժներ Երեւանի խուլ-համր երեխաների դպրոցից եւ 5 մասնագետ՝ մարզերից:



Լուս. Չերման Ավագյան/Յունիսեֆի



ՄԱԿ-ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

ՄԱԿ, Նյու Յորք, 2000թ. հոկտեմբերի 25: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի /ՄԱԲՀ/ գործադիր տնօրենը՝ դոկտոր Նաֆիզ Սադիկը, ողջունեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի հայտարարությունն այն մասին, թե նա 2001թ. հունվարի 1-ից Թորայա Օբեյդին (Սաուդյան Արաբիա) նշանակել է հիմնադրամի ղեկավար: Նա Սաուդյան Արաբիայի առաջին ներկայացուցիչն է, որը նշանակվել է ՄԱԿ-ի գործակալության ղեկավար: Տասնչորս տարի գործադիր տնօրեն լինելուց հետո դոկտոր Սադիկը անցնում է թռչակի:

Տիկին Օբեյդը ՄԱԲՀ-ի արաբական պետությունների և Եվրոպայի վարչության ներկայիս տնօրենն է: Այս պաշտոնը նա զբաղում է 1998թ. դեկտեմբերից: Մինչև հիմնադրամում աշխատելը՝ 1993-1998թթ., նա եղել է Տնտեսական և սոցիալական հանձնաժողովի գործադիր քարտուղարի տեղակալ: 1992-1993թթ. գլխավորել է Բնակչության և սոցիալական զարգացման վարչությունը և 1975-1992թթ. աշխատել է որպես սոցիալական հարցերով ծրագրերի ղեկավար կատարելով բազմաթիվ պարտականություններ:

Ինչպես Արևմտյան Ասիայի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովում, այնպես էլ ՄԱԲՀ-ում տիկին Օբեյդի աշխատանքի հիմնական նպատակն է եղել օժանդակել կառավարություններին՝ ի նպաստ կանանց իրավունքների հաստատման ծրագրերի մշակման: Արևմտյան Ասիայի Տնտեսական և սոցիալական հանձնաժողովում աշխատելիս նա պատասխանատու է եղել գենդերային անհավասարության դեմ պայքարի տեխնիկական աջակցության տրամադրման համար: Այս աշխատանքը սոցիալական զարգացման ծրագրերի անբակտելի մասն է կազմում:

1975թ. նա սկսել է կանանց զարգացման առաջին ծրագիրը

Արևմտյան Ասիայի տարածաշրջանում: Այն տեխնիկական աջակցություն էր ցուցաբերում կառավարություններին կանանց ազգային կազմակերպություններ ստեղծելու համար: Ծրագիրը օգնեց գործնական կապեր ստեղծել ՄԱԿ-ի և տեղական հասարակական կազմակերպությունների միջև:

1996թ. տիկին Օբեյդը նախագահել է ՄԱԿ-ի գենդերային միջգործակալական աշխատախումբը Ամանուն (Հորդանան): 1997թ. նոյեմբերին նա Աֆղանստան այցելած միջգործակալական պատվիրակության անդամ էր:

Տիկին Օբեյդը առաջին կինն է Սաուդյան Արաբիայում, որը ստացել է պետական կրթաթոշակ ԱՄՆ-ի համալսարանում սովորելու համար: Նա դոկտորի կոչում է ստացել անգլիական գրականության գծով Ուեյն համալսարանում (Դեբոյթ, Միչիգան): Նաև Միջին Արևելքի հետազոտական միության և սաուդյան կանանց «Ալ Նադիա» ասոցիացիայի ակտիվ անդամ է:

«Ես շատ գոհ եմ, որ Թորայա Օբեյդը ընտրվել է գործադիր տնօրեն, —ասաց դոկտոր Սադիկը:— Ես համոզված եմ, որ նա անհրաժեշտ փորձ և հմտություն ունի նոր հազարամյակում հիմնադրամը ղեկավարելու համար: Վերջին 30 տարիների ընթացքում մենք մեծ հաջողություններ ենք ունեցել բնակչության խնդիրների լուծման ասպարեզում: Անհատն այժմ բնակչության քաղաքականության ուշադրության կենտրոնում է և կանանց իրավունքների հաստատումը վճռական է համարվում զարգացման գործընթացում: Վերարտադրողական և սեռական առողջության հարցերը նախկինում երբեք չեն քննարկվել կառավարությունների և հասարակական կազմակերպությունների կողմից այնպես, ինչպես այժմ, բայց դեռ առջեւում շատ խնդիրներ կան»:

«Յուրաքանչյուր րոպեին մի կին է մահանում հղիության բարդությունների հետևանքով, և մոտ 350 մլն գույզ հնարավորություն չունի օգտվելու ապահով և արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներից, — շարունակեց դոկտոր Սադիկը:— Լինելով ՄԱԲՀ-ի արաբական պետությունների և Եվրոպայի վարչության տնօրեն Թորայա Օբեյդը ուշադրություն է ցուցաբերել այս հարցերի նկատմամբ, և ես հավատում եմ, որ նա խիզախությամբ առաջ կմղի դրանք: Եվ անշուշտ ես ուրախ եմ, որ իմ իրավահաջորդը կին է: Ես հաջողություն եմ ցանկանում տիկին Օբեյդին իր նոր պաշտոնում»:

«Հուսով եմ, որ 1994թ. Կահիրեում կայացած բնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսից հետո անդամ պետությունների բոլոր նվաճումները և կանանց ու տղամարդկանց կենսապայմանների բարելավումը ամբողջ աշխարհում շարունակություն կունենան, —ասաց տիկին Օբեյդը:— Վստահ եմ, որ ՄԱԲՀ-ն որպես ՄԱԿ-ի ընտանիքի անդամ, կշարունակի գործունե կերպով մասնակցել Գլխավոր քարտուղարի կողմից իրականացվող բարեփոխումներին և կօգնի առաջ մղել ՄԱԿ-ի մեր ընդհանուր ծրագիրը»:

ՄԱԲՀ-ն բնակչությանը օժանդակող աշխարհի ամենախոշոր միջազգային աղբյուրն է: Դոկտոր երկրներից զարգացող երկրների բնակչությանն ուղղված օժանդակության մոտ մեկ քառորդը իրականացվում է ՄԱԲՀ-ի միջոցով: Սկսելով իր գործունեությունը 1969թ.՝ հիմնադրամը փաստորեն մոտ 5 մլրդ ԱՄՆ դոլարի օգնություն է տրամադրել բոլոր զարգացող երկրներին: Հիմնադրամի հիմնական նպատակներն են օգնել երկրներին վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ուրախալ ծառայություններ տրամադրելու հարցերում հիմք ընդունելով անձնական ընտրությունը և մշակել կայսուն զարգացմանը նպաստող բնակչության քաղաքականություն: Հիմնադրամի ռազմավարությունը ուղղված է ավելի շուտ անհատ կանանց և տղամարդկանց կարիքներին, քան դեմոգրաֆիկ խնդիրների լուծմանը: Այս մոտեցման հիմնական գաղափարը կանանց իրավունքները պաշտպանելն է և ընտրության պայմաններ ստեղծելը՝ ընդլայնելով կրթություն, բժշկական ծառայություն և աշխատանք ստանալու հնարավորությունները:

ՄԱԲՀ-ն օժանդակող աշխարհի ամենախոշոր միջազգային աղբյուրն է: Դոկտոր երկրներից զարգացող երկրների բնակչությանն ուղղված օժանդակության մոտ մեկ քառորդը իրականացվում է ՄԱԲՀ-ի միջոցով: Սկսելով իր գործունեությունը 1969թ.՝ հիմնադրամը փաստորեն մոտ 5 մլրդ ԱՄՆ դոլարի օգնություն է տրամադրել բոլոր զարգացող երկրներին: Հիմնադրամի հիմնական նպատակներն են օգնել երկրներին վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ուրախալ ծառայություններ տրամադրելու հարցերում հիմք ընդունելով անձնական ընտրությունը և մշակել կայսուն զարգացմանը նպաստող բնակչության քաղաքականություն: Հիմնադրամի ռազմավարությունը ուղղված է ավելի շուտ անհատ կանանց և տղամարդկանց կարիքներին, քան դեմոգրաֆիկ խնդիրների լուծմանը: Այս մոտեցման հիմնական գաղափարը կանանց իրավունքները պաշտպանելն է և ընտրության պայմաններ ստեղծելը՝ ընդլայնելով կրթություն, բժշկական ծառայություն և աշխատանք ստանալու հնարավորությունները:

Դոկտոր Նաֆիզ Սադիկը՝ պակիստանցի մանկաբարձուհին, ՄԱԲՀ-ի գործադիր տնօրենն է նշանակվել 1987թ.՝ գլխավոր փոխքարտուղարի կարգավիճակով: Նա առաջին կինն էր, որը նշանակվել էր ՄԱԿ-ի գործակալության ղեկավար: Այսօր նա այն վեց կանանցից մեկն է, ովքեր այդպիսի դիրք ունեն ՄԱԿ-ում:



«ՄԱԿ-ի ՄՈՂԵԼԸ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«ՄԱԿ-ի մողելը» դիվանագիտական դերախաղ է, որի նպատակը ՄԱԿ-ի առաքելության, գործունեության հիմնական ուղղությունների, սկզբունքների, նպատակների և խնդիրների տարածումն ու արմատավորումն է հասարակությունում: Այն մեծ տարածում ունի ՄԱԿ-ի անդամ պետություններում: Հայաստանում «ՄԱԿ-ի մողելը» առաջին անգամ

ներկայացվեց նոյեմբերի 24-ին:

«ՄԱԿ-ի մողելը» ՄԱԿ-ի որոշումներ կայացնող որևէ մարմնի (Գլխավոր ասամբլեա, Անվտանգության խորհուրդ, Միջազգային դատարան և այլն) նիստի ընթացակարգի վերարտադրումն է: Խաղը բոլոր մասնակիցներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն ներգրավվել որոշումների կայացման գործընթացում և այդպիսով նաև սեփական տեսակետներն արտահայտել աշխարհին մտահոգող հիմնախնդիրների վերաբերյալ:

Խաղը նախաձեռնեցին և իրականացրին «ԱՐԵԳ 73» գիտամշակութային երիտասարդական ասոցիացիա հասարակական կազմակերպությունը և Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի ուսանողները՝ սա ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հասարակական տեղեկատվության բաժնի աջակցությամբ:

«ՄԱԿ-ի մողելի» նախաձեռնողները Հայաստանում փորձեցին ներկայացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մի նիստ, որի օրակարգում Կիպրոսի հակամարտությանն առնչվող հարցեր էին:

«ՄԱԿ-ի մողելին» դիտորդի կարգավիճակով հրավիրվեցին նաև Երեւանի մի քանի դպրոցների աշակերտներ, որոնց համար կազմակերպությունը վարել է «Սոցիալական կոնֆլիկտների հարթում և բանակցություններ վարելու տեխնոլոգիաներ» թեմայով դասընթացներ:

Բուն խաղին նախորդել է եռօրյա նախապատրաստական փուլը, որի ընթացքում եղել են դասախոսություններ հետևյալ թեմաներով.

– **Հայաստանի անդամակցությունը ՄԱԿ-ին, տարածաշրջանային հակամարտություններ և միջազգային հարաբերություններ** (դասախոս՝ ՄԱԿ-ում Հայաստանի առաջին դեսպան, ՀՀ նախկին արտգործնախարար պրն. Ա. Արզումանյան):

– **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի աշխատակարգը** (դասախոս՝ խորհրդային Հայաստանի վերջին արտգործնախարար, ՄԱԿ-ի ՀՏԲ կենտրոնական գրասենյակի նախկին աշխատակից, Հ.Աճառյան համալսարանի պրոֆ. Ա. Մկրտչյան):

– **Կիպրոսի հակամարտության պատմական ակնարկ** (դասախոս՝ ՀՀ ԱԳՆ Թուրքիայի բաժնի վարիչ, ԵՊՀ դասախոս պրն. Ա.Ավագյան):



Լուս. Արմինե Հարաջյանի

Մեր հասցեն. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ,
Կարլ Լիբկնեխտի 14, Երեւան, 375010



UNDP:
Հեռ. 52-93-41/58-31-94/151-453
registry@undp.am



UNFPA:
Հեռ. 56-03-40/56-60-73
karend@unfpa.am



UNDPI:
Հեռ. 56-02-12/151-647
dpi@undp.am



WFP:
Հեռ. 58-05-38/56-49-04/151-572
wfp@arminco.com



UNICEF:
Հեռ. 58-01-74/58-05-16/151-698
unicef@arminco.com



WHO:
Հեռ. 56-43-67/56-53-24
who@lx2.yerphy.am



UNHCR:
Հեռ. 56-47-71/58-48-92/151-451
unhcr@arminco.com



IOM:
Հեռ. 58-56-92/151-793
iom@arminco.com

Համարում օգտագործվել են

ՄԱԿ-ի համակարգում գործող կազմակերպություններից և ՀՏԲ-ից ստացված նյութերը

Մեկնաբանությունների կամ լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՏԲ-ի Երեւանյան գրասենյակ
Տես նաև ՀՏԲ վեբ կայքը՝ <http://www.undpi.am>